



Արգիշտի Բ-ի սեպագիր արձանագրությունը Թանահատի վանքում

Էջ 3



Սյունիքի Գրիգոր Ա թագավորի դիմաքանդակը

Էջ 4



Առյուծի բրոնզե արձանիկ (մ.թ.ա. 7-րդ դար), գտնվել է Կապանի Սգնակ գյուղում

Էջ 35



Քարե հնգադեմ կուռք (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ), գտնվել է Հարժիսում

Էջ 47

Սյունյաց երկիր մշակութային

30 ՀՈՒՆԻՍԻ 2024թ.
№ 14

www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆՓՈՎԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ
ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am



Սյունիքը՝ ազգային ոգու և ավանդների լավագույն պահեստարան

Այդ են հավաստում նաև Սյունիքի
պատմամշակութային արժեքները, այդ թվում՝
մարզի թանգարանների ցուցանմուշները



Չորաց քարեր



7 ՀԱՐԳԱԳՐՈՅՑ ՀԱՄԱՐԻՆ Հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի հետ



39 ԹԱՆԳԱՐԱՆ ԲԱՑ ԵՐԿՆԵՐԻ ՏԱԿ Ուխտասար. Ժայռապատկերների (իծագրերի) թանգարանը



21 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ Կապանի ժամանակակից արվեստի թանգարանը



49 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի թանգարանի ստեղծումը՝ օրախնդիր

40 ՍԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ՏՈՀՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ Կարպետների բացառիկ հավաքածու Գորիսում

≡ ՍՅՈՒՆԻՔՑԱՆ ԳԱՆՁԵՐ՝ ՄԱՅՐԱՔԱՎԱԿԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Սյունիքը՝ Ուրարտական (Ք.ա. 8-րդ դարից) և Երվանդունիների (Ք.ա. 6-րդ դարից) միասնական հայկական պետության նահանգ՝ 12 գավառով.....3

Արգիշտի Բ-ի սեպագիր արձանագրությունը Թանահատի վանքում3

Ճակատակալ, բրոնզ՝ Ք.ա. 8-7-րդ դարեր՝ գտնված Կապանում3

Սարդարապատի հուշահամալիր. հայոց ազգագրական թանգարան (Սյունիքի թագավոր Գրիգոր Ա-ի, Գանձասարի վանքի հիմնադիր Հասան Չալայանի և Աղվանաց Դինար թագուհու՝ Գանգի վրա վերականգնված դիմաքանդակները)4

Հայաստանի պատմության թանգարան (ցուցանմուշներ՝ Միսիանի իշխանական դամբարանից և Ստանակունքի գանձերից, ինչպես նաև Արտաշես արքայի անունով արամեերեն արձանագրությամբ սահմանաքար)4

≡ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սյունիքը՝ հայկական միասնական պետության անքակտելի մաս՝ Հայաստանի և Ուրարտուի ժամանակներից. այդ են հավաստում նաև թանգարանային ցուցանմուշները (Սամվել Ալեքսանյան).....5

≡ ՀԱՐԳԱԳՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի հետ7

Գրիշա Սմբատյան. «Թանգարանի աշխատողին ըստ ամենայնի պիտի վճարել, որ այնտեղ աշխատելու գնա ոլորտի մասնագետը»..... 10

Ե՞րբ պիտի Մեդրին ունենա երկրագիտական թանգարան (հարցազրույց Նաիրա Հայրապետյանի հետ)..... 11

≡ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

Հայոց պատմության հրաշք Քարահունջը (Պարիս Հերունի)..... 13

Չորաց քարեր (Աշոտ Փիլիպոսյան, Աշոտ Ավագյան) 15

Չորաց քարեր հուշարձանը որպես հնագույն աստղադիտարան (Հայկ Մայիսայան)..... 17

Քարահունջ աստղադիտարանը՝ մեր ազգի ծննդյան վկայաքար (հարցազրույց պրոֆեսոր Գառնիկ Ստեփանյանի հետ)..... 18

Հարցազրույց «Չորաց քարեր բնակատեղի» պատմամշակութային արգելոցի վարիչ Արամ Դավթյանի հետ 20

≡ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Միսիանի պատկերասրահը 21

Կապանի ժամանակակից արվեստի թանգարանը (հարցազրույց գեղանկարիչ Բորիս Մինասյանի հետ)..... 21

Գորիսի քաղաքային պատկերասրահը 23

≡ ՍՅՈՒՆԻՔԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Մերո Խանգաղյանի տուն-թանգարանը՝ պատմություն և հավերժական երթ (Մուսաննա Բաբաջանյան) 24

Մերո Խանգաղյանի բնակելի տների ողիսականը (Սամվել Ալեքսանյան) 26

Չաքար Խաչատրյանի և Արտաշես

Հովսեփյանի տուն-թանգարանը..... 25

Մարդահոտ առնելու՝ իրիկնահացի գրույց... (հարցազրույց Համո Սահյանի տուն-թանգարանի վարիչ Քնքուշ Հարությունյանի հետ) 27

Հայ մեծանուն գրող Ակսել Բակունցի տուն-թանգարանը (հարցազրույց տուն-թանգարանի վարիչ Վարդան Մարգարյանի հետ) 29

Ակսել Բակունցի տուն-թանգարանը .. 30

Թե ինչպես հիմնադրվեց Ա. Բակունցի տուն-թանգարանը 30

Ակսել Բակունցի տուն-թանգարանի բացումը..... 31

≡ ՍՅՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Կապանի երկրագիտական թանգարանը (Այրա Հայրապետյան) 32

Շմալվոն Մովսիսյանի անվան Կապանի պատմության թանգարանը (Արմեն Գևորգյան)..... 33

Գորիսի երկրագիտական թանգարանը՝ ազգի հարատևության յուրօրինակ անձնագիր (հարցազրույց թանգարանի վարիչ Վարդան Մարգարյանի հետ) 34

Միսիանի Ն. Աղոնցի անվան պատմության թանգարանի արձանագիր առարկաները (Արսեն Հարությունյան)..... 36

Թանգարանը հեշտ տեղ չէ... (Շովիհար Պետրոսյան) 37

Միսիանի պատմության թանգարանը (Թաթուլ Մյունի)..... 39

≡ ԹԱՆԳԱՐԱՆ ԲԱՑ ԵՐԿՆԵՐԻ ՏԱԿ

Ուխտասար. ժայռապատկերների (իծագրերի) թանգարանը..... 39

≡ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ՏՈՀՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Կարպետների բացառիկ հավաքածու. Գորիսում (Կոլեկցիոներ՝ Ռոման Առուշանյան) 40

Խրիմյան Հայրիկից մի նշխար (Մերո Խանգաղյան) 41

Տարիքը չթաքցնող տունը. սահմանային լարված իրավիճակը չի խանգարի, որ Գորիսում տոհմական թանգարան-թեյարան բացվի..... 42

Գորիսի «Միրիադ» հյուրանոցի հնագիտական իրերի հավաքածուն, որի մեջ է նաև մամոնտի քանդակը (Սամվել Ալեքսանյան)..... 43

≡ ԲԱՅՕԹՅԱՔԱՎԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Միսիանի քարադարանը 44

Միսիանի քարադարանի արձանագիր առարկաները (Արսեն Հարությունյան) 44

Հարժիսի քարադարանը (Սամվել Ալեքսանյան)..... 47

≡ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի թանգարանի ստեղծումը՝ օրախնդիր 49

Տարևի վանական համալիրի Չիթան-թանգարանը 50

≡ ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՎԵՐԹԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՐ ՈՒ ԱՌՀԱՎԱՏՅՈՅՑ

Սյունիք (Համո Սահյան)..... 52

Հատված Առնոյ Ալիշանի «Միսական» կոթողային գործից 52

Սյունիքը՝ Ուրարտական (Ք.ա. 8-րդ դարից) և Երվանդունիների (Ք. ա. 6-րդ դարից) միասնական հայկական պետության նահանգ՝ 12 գավառով

Այդ իրողությունը հաստատում են տարբեր ժամանակներում Սյունիքում գտնված հարյուրավոր ցուցանմուշները, որոնք պահպանվում են մայրաքաղաքի թանգարաններում: Դրանց մի մասը՝ ստորև:

Արգիշտի Բ-ի սեպագիր արձանագրությունը Թանահատի վանքում

1976 թվականին Թանահատի վանքում հայտնաբերվել է Ուրարտական թագավոր Արգիշտի Երկրորդի կողմից ստեղծված մի սեպագիր արձանագրություն՝ գրված քարակոթողի երկու երեսի վրա: Արձանագրության մեջ հիշատակվում է Ծղուկ (Շուլուկու) երկրի անունը: Սեպագիր արձանագրությունը ներկայումս գտնվում է Երեբունի թանգարանում: Հիշեցնենք, որ Արգիշտի Երկրորդը գահակալել է Ք.ա. մոտ 713-685 թթ.: Ստորև՝ սեպագրի թարգմանությունն ըստ նշանավոր ուրարտագետ Նիկոլայ Հարությունյանի և Միլոյ Սալվանի (սեպագրի լուսանկարի երկու դիմերեսը՝ հողվածին կից ներկայացվող լուսանկարների մեջ):

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքից արևմուտք տեղակայված Թանահատի շրջակայքում խաչքարերի շարքում 1975 թվականին հայտնաբերվել է մի բացառիկ բազալտե քարակոթող: Այն ուրարտական երկկողմանի սեպագիր արձանագրություն է, որը հետագայում հավանաբար XII-XIII դարերում վերածվել է խաչքարի:

Հայաստանը քրիստոնեությունը որպես պետական կրոն ճանաչած առաջին երկիրն է: Քրիստոնեության ընդունման և երբեմն հետագա ժամանակներում նախաքրիստոնեական ժամանակաշրջանին վերաբերող մի շարք կոթողներ քրիստոնեացվում էին: Այդ ամենի համար հաճախ օգտագործվում էր քրիստոնեության կարևորագույն խորհրդանիշ խաչը:

Սկզբնական շրջանում այս կոթողը եղել է երկկողմանի ուրարտական սեպագիր արձանագրություն, որը կերտվել է Վանի (Բիայնիի, Ուրարտու, Արարատ) թագավորության միապետ Արգիշտի II-ի կողմից (մոտ Ք. ա. 713-685 թթ.): Ցավոք, արձա-

Դիմերես

1. Խալդի աստծուն՝ տիրոջը,
2. Այս կոթողն Արգիշտին
3. Ռուսայրոդին կանգնեցրեց
4. իր ողջության համար
5. Թող լինի Խալդի աստծո կողմից
6. Արգիշտի
7. Ռուսայրոդու,
8. բարեգործություն (?), ekuše (?),
9. երջանկություն, ողջություն,
10. ուրախություն, մեծություն,
11. և կարգ,
12. ուժ, զորություն,
13. Խալդյան մեծությամբ... (?) (x)...մեկ օրում նվաճեցի ...

Գործերես

1. Իմ առջև ժամանեց... արքան,
2. Եթովպի երկրի, տվեց տուրքը,
3. իր երկրի: Որոշ? քաղաքներ
4. Լսեցին ...վայրը,
5. որոշ? Ռագմիկներ,
6. ari biri, այստեղ լի է,
7. ես արեցի, տղամարդկանց, կանանց տարա,
8. քաղաքներն այրեցի, ամրոցներն ավերեցի
9. Išiasie (?) միասին (?), բոլորը,
10. Ճակատամարտ եղավ: Ազնվականությունը (?)
11. Շուլուկու երկրի, այնտեղից (?),
12. Իրողա քաղաքի առջև ժամանեց
13. իմ առջև: Արքային Չազինու (?) ես իմ ծառան դարձի,
14. տուրք այնտեղ սահմանեցի, Խալդյան
15. մեծությամբ, այստեղ (?),



Արգիշտի Բ-ի սեպագիր արձանագրությունը Թանահատի վանքում

16. Արգիշտի Ռուսայրոդին
17. արքան հզոր, արքան Բիայնա երկրի,
18. տերը Տուշպա քաղաքի:
19. Խալդյան հրամանով,
20. Արգիշտին ասում է, ով (?)
21. Արևի աստծո կայագորը (?)
22. այս ճանապարհով գնաց (?)



23. դեպի Ամուշա քաղաք, տղամարդկանց,
24. կանանց տարա Բիայնա երկրի
25. Արգիշտին ասում է,
26. Ո՛վ անուն (իմ) ոչնչացնի,
27. իր անունը դևի, լինի դա
28. բիայնացի, լինի
29. թշնամի, թո՛ղ Խալդին,
30. Տարերքի աստվածը, Արևի աստվածը,
31. ո՛չ նրա անունը, ո՛չ
32. ընտանիքը, ո՛չ
33. սերմը երկրի վրա,
34. չթողնեն:

նագրության դիմերեսը արված խաչի քանդակի պատճառով վնասվել է և որոշ հատվածներ վերականգնվել են այլ նույնանման տեքստերի համադրությամբ: Այս կոթողը խիստ կարևոր է նաև նրանով, քանի որ այն հանդիսանում է Սյունիքի մարզից գտնված միակ ուրարտական սեպագիր արձանագրությունը: Բավական հետաքրքիր է նաև դարձերեսի տեքստը, որը կարևոր տեղեկություններ է հաղորդում տարածաշրջանի այդ ժամանակաշրջանի քաղաքական կյանքի, քաղաքների և

երկրների մասին: Մասնավորապես, արձանագրության սկզբում հիշատակվում է Եթովպի (Եթիունի) երկրի արքան, ինչը փաստում է այն մասին, որ ներկայիս Կարսի շրջանից սկսվող հզոր Եթիունյան համադաշնությունը առնվազն տարածվել է դեպի Սյունիք: Հետաքրքիր է նաև, որ արձանագրությունում հիշատակվում է Շուլուկու երկիրը, որը Մեծ Հայքի Սյունիք նահանգի Ծղուկ գավառի վարչագույն հիշատակությունն է: Արձանագրությունն ավարտվում է ուրարտական բազմաթիվ սեպագիր տեքս-

տերին բնորոշ «անեծքի բանածնով» համաձայն որի՝ արձանագրության ոչնչացնողներն ու վնասողները դաժանորեն պատժվելու են ուրարտական տերության գերագույն աստված Խալդիի, տարերքի աստված Թեյշեբայի և արևի աստված Շիվիլիի կողմից:

ՀՀ Սյունիքի մարզից հայտնաբերված միակ ուրարտական սեպագիր արձանագրությամբ կոթողն այժմ ցուցադրված է Երեբունի թանգարանում:

Ճակատակալ բրոնզ՝ Ք. ա. 8-7-րդ դարեր՝ գտնված Կապանում

2016թ. ձիու բրոնզե ճակատակալն ի պահ է տրվել Կապանի երկրագիտական թանգարանին: Գտածոն թանգարանին ի պահ տալուն մեծ դեր են ունեցել Կապանի երկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Գրիշա Սմբատյանը, նախկին ֆոնդապահ Արմինե Հովհաննիսյանը, Սյունիքի մարզի ՊՄՊ մարզային ծառայության նախկին պետ Աստղիկ Հակոբյանը, Սյունիքի մարզային քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Լարիսե Հովհաննիսյանը:

Ձիու ճակատակալի դիմերեսի ձախ հատվածում առկա է խորադրի տողերով առանձնացված սեպագիր գրություն:

m Ar-gi-iš-ti-i
ú-ri- iš-hi



Ճակատակալ Ք. Ա. 8-7 դդ.

Առաջին տողում գրված է Արգիշտի անունը՝ տրական հոլովով, երկրորդ տողը դատարկ է, երրորդ տողում նշված է ուրիշխի



բառը: Մի խումբ մասնագետներ հավանում են կարծելու, ուրիշխի նշանակել է պահեստ կամ սեփականություն կամ գինանոց: Դեռևս դժվար է ասել, թե որ Արգիշտիի մասին է խոսքը՝ Մենուայի որդի՞ Արգիշտի,

թե՞ Ռուսայի որդի Արգիշտի: Սակայն, կարելի է փաստել, որ ճակատակալը Հայաստանի Հանրապետության տարածքից երբևէ գտնված (ամենահարավային տեղորոշմամբ) սեպագիր արձանագրությամբ առարկան է:

Ճակատակալի դարձերեսին կենտրոնական հատվածում առկա է ցուլի գլխով պատկեր, ինչն ամենայն հավանականությամբ խորհրդանշել է արքայական իշխանությունը և կամ հանդիսացել է հիերոգլիֆ նշան:

Բրոնզե ճակատակալը գտնվել է Կապանից քիչ հեռու գտնվող դամբարաններից մեկում:

Ուղարկվել է Երեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, որտեղ էլ վերականգնել և ամրակայել է Մանվել Դալայանը:

Սեպագիր արձանագրությունն ընթերցել են պատմական գիտությունների թեկնածու, ուրարտագետ Միխայել Բաղայանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը, պատմական գիտությունների դոկտոր Երվանդ Գրեկյանը և ուրարտագետ Վահե Սարգսյանը:

Մարդարապատի հուշահամալիր. հայոց ազգագրական թանգարան



ՀԱՊԹ 193/3 / Գանգի վրա վերականգնում՝ Սյունիքի թագավոր Գրիգոր I-ի
Սյունիքի XI դարի թագավոր Գրիգոր I-ի դիմաքանդակն է: Ունի թավ հոնքեր, թեք ճակատ, սուր աչքեր, փոքր բերան, բարակ շուրթեր: Գլխին կրում է թագ, որի տակից երևում են ծոծրակին իջնող մազերը: Թագն իրենից ներկայացնում է նեղ ժապավեն, որի վրա ամրացված են դեպի վերև սրացող և գնդիկներով ավարտվող հատվածներ: Թագը զարդարված է քարերով: Հագին կրում է առանց օձիքի վերնաշապիկ, որը կրծքի հատվածում միանում է կրծքազարդով:
Վահանավանք, մ.թ.11դ.:
Նյութը՝ ոսկոր, մեղրամոմ, խեժ, բարձ. 43, լայն. 41սմ:
Վերականգնել է պրոֆ. Անդրանիկ Ճաղարյանը:

ՀԱՊԹ 193/3 / Գանգի վրա վերականգնում՝ Հասան Ջալալյանի
Վերականգնված դիմաքանդակը պատկանում է Գանձասարի վանքի հիմնադիր, Արցախի զորավար և գահաժառանգ Հասան Ջալալյանին: Պատկերված է սաղավարտով և թիկնոցով, որն աչ ուսին ամրացված է կլոր ճարմանդով:
Նյութը՝ ոսկոր, խեժ, մեղրամոմ, 65*42,3 սմ: Վահանավանքի արքայական պալթեն, N 3 դամբարան, մ.թ. XI-XII դդ.: Վերականգնել է պրոֆ. Անդրանիկ Ճաղարյանը:

ՀԱՊԹ 193/5 / Գանգի վրա վերականգնում՝ Աղվանաց Դինար թագուհու
Դինար թագուհու գանգի հիման վրա վերականգնված դիմաքանդակ է: Դեմքը փոքր-ինչ կլնոտված է և ունի դժգոհ արտահայտություն: Գլխին կրում է քարերով զարդարված թագ: Երկար վարսերը թափվում են իրանի և կրծքի վրա:
Վահանավանք, մ.թ. 10 դ.:
Նյութը՝ ոսկոր, մեղրամոմ, խեժ, բարձր. 39,5, լայն.32 սմ:

Հայաստանի պատմության թանգարան

Ֆուցանմուշներ՝ Միսիանի իշխանական դամբարանից և Սառնակունքի գանձերից



Միսիանի գանձ., 1986թ., ՀՊԹ 19512/8



Մեդալիոն Աստվածուհու պատկերով, Միսիանի իշխանական դամբարան, ՀՊԹ 2618/13



Մեդալիոն արծվի պատկերով, Միսիանի իշխանական դամբարան, ՀՊԹ 2618/15



Միսիանի գանձ., 1986թ., ՀՊԹ 19512/116



Գավաթ, Միսիանի իշխանական դամբարան, ՀՊԹ 2618/25



Դրահմա, Տիգրան Մեծ, Սառնակունքի գանձ., ՀՊԹ 17824/51



Դրահմա, Արտավազդ Բ, Սառնակունքի գանձ., ՀՊԹ 16022

Արտաշես արքայի անունով արձանագրության սահմանաքար



Սահմանաքար, Սյունիք, ՀՊԹ 2611

Սյունիքը՝ հայկական միասնական պետության անքակտելի մաս՝ Հայաստանի և Ուրարտուի ժամանակներից. այդ են հավաստում նաև թանգարանային ցուցանմուշները

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ներկայացնում ենք Սյունիքի մարզի մշակութային կյանքի կարևոր օղակներից մեկը՝ թանգարանները: Թեմայի շրջանակն ուրվագծելու համար նախևառաջ փաստենք՝ թանգարանն արվեստի ստեղծագործություններ, պատմական, գիտատեխնիկական և բնագիտական իրեր ու ցուցանմուշներ հավաքող, պահպանող և ցուցադրող հիմնարկություն է: Հիմնականում այդ տրամաբանությամբ էլ կառուցել ենք հանդեպի սույն համարը:

Սյունիքի թանգարանային տնտեսությունն իր մեջ ներառում է արգելոց-թանգարան (Չորաց քարեր), երկրագիտական կամ պատմության թանգարաններ, տուն-թանգարաններ կամ հուշարաններ թանգարաններ, պատկերասրահներ կամ գեղարվեստական թանգարաններ, մասնավոր թանգարաններ կամ մասնավոր հավաքածուներ (այդ թվում՝ տոհմական թանգարաններ), նախաթանգարաններ, քաղաքացիական նախաձեռնություններ:



Սեր ազգային ինքնության մասին վկայող բազմաթիվ ցուցանմուշներ՝ սյունիքյան ծագումով, պահպանվում են ոչ միայն մարզի թանգարաններում: Դրանց մի մասը մայրաքաղաքի թանգարաններում է: Մեկ ուրիշ առիթով գուցե և հանգամանալից անդրադարձ կատարենք մայրաքաղաքի թանգարաններում պահվող՝ սյունիքյան ծագումով ցուցանմուշներին:

Սակայն, սույն համարում կամեցանք շատ համառոտ անդրադարձ կատարել մի քանի ցուցանմուշի կամ հնագիտական առարկայի, որոնք թույլ են տալիս հավելյալ անգամ փաստել՝ Սյունիքն Ուրարտական (Ք. ա. 6-րդ դարից) միասնական հայկական պետության մաս է կազմել՝ իր 12 գավառով: Այդ առումով չափազանց կարևոր է Արգիշտի Բ-ի սեպագիր արձանագրությունը՝ գտնված 1976-ին՝ Թանահաստի վանքում (Արգիշտի 2-րդը գահակալել է մ.թ.ա. 713-685 թթ.):

Թանգարանների պահեստարաններում կամ ցուցասրահներում գտնվող ամեն մի նմուշ սույն հնագիտական կամ ազգագրական նշանակության առարկա չէ: Դրանցից յուրաքանչյուրը մեր ինքնության մի նրբագիծն է, իսկ այդ ամենի շնորհիվ մենք ենք՝ հազարամյակների մեր պատմությամբ, մեր կենցաղով:



Թագուհի (պետական այդ կազմավորումը գոյություն է ունեցել մ.թ.ա. 15-13-րդ դարերում):

Հուզիչ դրվագներ կան վեպում Սյունիքին առնչվող: Դրանցից մեկը Հայաստանի թագաժառանգ Կարանիի այցն է մեր երկրամաս:

Սիսականի գլխավոր ցեղապետն էր դիմավորում Հայաստանի թագաժառանգին. Մարի-Լույսի հայրն էր նա՝ Շատայոյսը:

Թագաժառանգն այնուհետև մեկնում է հայոց պետության մեկ այլ երկրամաս՝ Արցախ, որ Հայաստան երկրի արևելյան վահանն էր: Արցախի գլխավոր ցեղապետ Բագարատ Դոլան ռազմաճակատում էր, ուստի և նրա որդիներն էին եկել դիմավորելու հայոց թագաժառանգին:

– Աստվածների աջը կպավ մեր տանը, ո՛վ աստվածների սիրելի տեր մեր: Քեզանով պանծացան մեր աստվածները և մենք: Ողջո՛յն և խոնարհություն անձիդ: – Այդպես դիմավորեցին Արցախի գլխավոր ցեղապետի որդիները Հայաստանի թագաժառանգին:

Անպայման ընթերցեք Սերո Խանգալյանի «Թագուհին հայոց» վեպը և Նորովի կտեսնեք, թե միասնական հայկական պետության կազմում որքան կարևոր դեր են ունեցել Սյունիքն ու Արցախը:

Համարում պատշաճ անդրադարձ ենք կատարում Չորաց քարեր արգելոց-թանգարանին:

Թեմայի մեջ խորացել էինք դեռևս 1996 թ. մայիս-հունիսին, երբ հնավայրում աշխատում էին ակադեմիկոս Պարիս Հերոնու ղեկավարած արշավախումբը, ինչպես և հանրապետության ռադիոպրոտի ֆեդերացիայի արշավախումբը՝ ֆեդերացիայի փոխնախագահ Գեորգի Բաղայանի ղեկավարությամբ:

Ակադեմիայի կազմակերպած այդ գիտարշավը երրորդն էր. նախորդները կազմակերպվել էին 94-95 թվականներին:

Սյունիքի մարզպետ Սուրեն Աբրահամյանի հանձնարարությամբ երկու օր այնտեղ էինք՝ Պարիս Հերոնու աջակցելու առաքելությամբ:

Մասնակցեցինք նաև ռադիոարշավախմբի գործունեության հանդիսավոր բացմանը, որը տեղի ունեցավ հունիսի 22-ին՝ Սիսիանի քաղաքի Նախագահ Նորայր Հակոբյանի բացման խոսքով:

Հնավայրի վերաբերյալ ներկայացնում ենք գիտության մեջ շրջանառվող և միմյանց հերքող երկու տեսակետ՝ ա) Չորաց քարերն աստղադիտարան է եղել, բ) Չորաց քարերը դամբարանադաշտ է և բնակատեղի:

Աստղադիտարանի վարկածը ներկայացվում է ակադեմիկոս Պարիս Հերոնու հողվածով, որը հրապարակել ենք 1996-ին՝ «Սյունիք» թերթում:

Տեսակետը հիմնավորում և խորացնում է ՀՀ ԳԱՆ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի Պատմա-շակութային աստղագիտության գիտահետազոտական բաժնի վարիչ Հայկ Մալխասյանը:

Տեսակետի շուրջ գրուցում ենք Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի պրոֆեսոր Գառնիկ Ստեփանյանի հետ:

Վերջին երկուսը հիմնավորում են, որ Քարահունջի աստղադիտարանը մեր ազգի ծննդյան վկայաքարն է և այն ոչ թե 7 հազար տարեկան է (ինչպես կարծում էր Պարիս Հերոնին), այլ 32 հազար տարեկան:

Նաև մեր օրերում ակտիվորեն շրջանառվող այդ վարկածին հակադրվում են հնագետները՝ առաջ քաշելով միանգամայն այլ տեսակետ՝ հնավայրը բրոնզդարյան երկաթդարյան մեգալիթյան հուշարձան է, իսկ ավելի կոնկրետ՝ Չորաց քարերը դամբարանադաշտ է ու բնակատեղի, որը կապ չունի «աստղադիտարանին» առնչվող երևակայական-ընդական ենթադրությունների հետ:

Այդ տեսակետին ընթերցող կարող է ծանոթանալ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանի և արվեստագետ Աշոտ Ավագյանի՝ համատեղ գրված հոդվածում «Չորաց քարեր»:

Աշոտ Փիլիպոսյանն իր տեսակետը հիմնավորել է նաև 2017 թ. սեպտեմբերի 2-ին մեզ հետ ունեցած զրույցում, երբ ավարտվել էին հուշարձանի տարածքում այդ տարվա օգոստոսի 23-ից կատարվող պեղումները: Հարցազրույցը Նորից չենք ներկայացնում, քանզի դրա հիմնադրույթներն արտացոլված են նաև վերոհիշյալ հոդվածում:

Ավագյանի ավելացնենք, որ հուշարձանի ուսումնասիրությամբ ավելի վաղ զբաղվել են Երվանդ Լալայանը (20-րդ դարասկիզբ), Ստեփան Լիսիցյանը (1920-30-ական թվականներ), 1950-60-ականներին՝ Մորուս Հասարայանը և ուրիշ հնագետներ:

Թանգարանի յուրօրինակ տեսակ են Սիսիանի և Հարժիսի քարադարանները, որոնց մասին նույնպես տեղեկություններ են ներկայացվում համարում:

Սիսիանի քարադարանը հիմնադրվել է Շչորս Դավթյանի նախաձեռնությամբ, Սիսիանի պատմության թանգարանի բակում 1982-84 թվականներին՝ ճարտարապետ Արեգ Իսրայելյանի նախագծով կառուցված մուտք-կամարով: Չբաղեցնում է շուրջ 4600 քմ տարածք:

Հարցագրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի հետ

Սյունիքի մարզի մշակութային կյանքում նշանակալի դեր են խաղում թանգարանները: Դրանց հավաքածուներում կենտրոնացված է իրենց առարկաների այնպիսի մեծ պաշար, որը սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունի Սյունիքի պատմության ուսումնասիրման, ինչպես և աճող սերնդի հայրենագիտական ու գեղագիտական դաստիարակության գործում:



Թեման ըստ պատշաճի ներկայացնելու համար անհրաժեշտություն առաջացավ նախևառաջ ծանոթանալ ոլորտի ընդհանուր պատկերին (հանրապետության մասշտաբով), իրականացվող պետական քաղաքականությանը, բնագավառի հիմնախնդիրներին ու զարգացման ուղիներին, մարզերում կատարվող աշխատանքներին, ինչի համար գրույցի հրավիրեցինք ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին:

- **Պարոն Քոչարյան, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշակցությանը հրատարակվող «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի հերթական համարը նվիրում ենք մարզի թանգարաններին: Եվ որպեսզի կարողանանք համակողմանի ու հիմնավոր ներկայացնել Սյունիքի թանգարանները, նպատակահարմար գտանք Ձեր օգնությամբ պարզաբանել մի քանի հարց: Նախ՝ ի՞նչ ասել է թանգարան:**

- Ուրախ եմ տեղեկացնել, որ անկախ Հայաստանի պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցավ իր կարգավորող հիմնական մայր օրենքը՝ «Թանգարանների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, սահմանում թանգարանների տեսակները, գործառնությունները, հիմնական հասկացությունները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության սկզբունքները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները ժամանակավոր պահպանության հանձնելու և արտահանման գործընթացները:

Օրենքով սահմանվել է նաև «թանգարան» հասկացությունը, որը համահունչ է Թանգարանների միջազգային խորհրդի՝ ԻԿՕՄ-ի կողմից թանգարանների նոր սահմանմանը:

«Թանգարան՝ ոչ առևտրային կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը հավաքում, պահպանում, ուսումնասիրում և հանրայնացնում է նյութական պատմամշակութային ժառանգության առարկաներ և ոչ նյութական մշակութա-

յին ժառանգության արժեքներ, հասանելի է հանրությանը և իրականացնում է սոցիալ-մշակութային, գիտահետազոտական, կրթական գործունեություն»:

- **Թանգարանային գործի համառոտ պատմությունը Հայաստանում նախատիպերից մինչև մեր օրեր:**

- Հայկական լեռնաշխարհում թանգարանների նախատիպերը եղել են դեռևս ուրարտական ժամանակաշրջանում հին և հնագույն մեղաներում, սակայն դրանից առաջ էլ եղել են արվեստի, դպրության, ճարտարապետության կենտրոններ: Հայաստանում ևս եղել են նախաթանգարանային հավաքածուներ: «Կարմիր բլուր» հնավայրից հայտնաբերված նյութերը խոսում են հենց դրա մասին: Հելլենիստական շրջանի հայկական արքունիքներում ևս եղել են բարձրարժեք հավաքածուների գոյություն, հեթանոսական աստվածների կամ արքայական նախնիների պաշտամունքային բարձրարժեք նմուշներ:

Արդեն քրիստոնեության ընդունումից հետո ևս եկեղեցիների կից ստեղծվել են ավանդատուն-գանձարաններ, գրադարան-մատենադարաններ: Վկայությունների համաձայն միջնադարյան Հայաստանում ունեցել է իր «իսկական թանգարանները», որոնք բաժանվել են երեք կարգի՝ արքունի, իշխանական և եկեղեցական թանգարաններ:

19-րդ դարի կեսերից սկսած հայ մտավորականության շրջանում ակտիվանում են պատմամշակութային ժառանգության հավաքման, պահպանման և ուսումնասիրման ձգտումները և այդ նպատակով եվրոպական ազդեցությամբ թանգարանների ստեղծման փորձը: Հայաստանում թանգարան հիմնելու առաջին մեծ հայտնի փորձը կապված է Խ. Աբովյանի անվան հետ, ով 1840-ական թվականներին Երևանի գավառական դպրոցին կից հիմնում է «Հայկական հնությունների կաբինետ»:

Թանգարաններ ստեղծելու ուղղությամբ պետական ջանքեր գործադրվեցին Հայաստանի առաջին հանրապետության կարճատև գոյության տարիներին: 1919 թվականին Հայաստանի առաջին հանրապետության պառլամենտի որոշմամբ ստեղծվում է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարանը՝ ներկայիս Հայաստանի պատմության թանգարանը: Խորհրդային կարգերի ընդունումից հետո առանձին եկեղեցիներին և դպրոցներին կից գործող

Թանգարանային կրթությունը նաև ամրագրվել է օրենքով՝ որպես թանգարանների առաջնահերթ պարտադիր գործառույթ: Հայաստանի բոլոր թանգարաններն իրականացնում են հասարակության բոլոր սոցիալական շերտերի և տարիքային խմբերի, հատկապես՝ երեխաների և պատանիների համար նախատեսված կրթական ծրագրեր. յուրաքանչյուր տարի թանգարանների կրթական ծրագրերին մասնակցում է ավելի քան 35 000 այցելու:



թանգարանները հիմնականում պետականացվեցին, ստեղծվեցին նոր թանգարաններ: 1930-ական թվականները բեկումնային էին թանգարանների համար, թանգարանային հավաքածուները սկսեցին բաժանվել ըստ մասնագիտացման՝ երկրում ստեղծվելով թանգարանների ցանց: Թանգարանային հավաքածուները տարանջատվեցին՝ ստեղծվեցին Կերպարվեստի թանգարանը (ներկայիս՝ Հայաստանի ազգային պատկերասրահը), գրական բաժնի վրա ձևավորվեց Գրական թանգարանը (ներկայիս՝ Զարեցի անվան գրականության և արվեստի թանգարանը) և այլն:

Խորհրդային առաջին շրջանում ռուսական ազդեցությամբ սկսեց ձևավորվել հուշային թանգարանների ցանցը՝ հատկապես անվանի անձանց նվիրված տուն-թանգարանների ստեղծմամբ: Հետագայում այդ գործընթացն ակտիվ շարունակվեց: Ստեղծվեցին բազմաթիվ տուն-թանգարաններ: 1950-ականներից նորոգվեցին շարունակվեցին հուշարձանների և պատմական միջավայրի հիմքով թանգարանների ստեղծման գործընթացը: Ստեղծվեցին նոր արգելոց-թանգարաններ: Հետխորհրդային շրջանում ստեղծված ծանր իրադրության պայմաններում թանգարանները կանգնեցին լուրջ մարտահրավերների առջև: 1990-ականների վերջից փորձ արվեց առավել բարձրացնել համայնքների դերը թանգարանների կառավարման գործում, սակայն շատ տեղական,

համայնքային թանգարաններ հայտնվեցին նյութական և մասնագիտական առումով դժվարին պայմաններում, որը շարունակվում է մինչ օրս:

2000-ականների առաջին տասնամյակը բեկումնային էր հայաստանյան թանգարանների հետագա զարգացման, ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման, մասնագիտական կարողությունների զարգացման տեսանկյունից, որը պայմանավորված էր մի կողմից պետական քաղաքականության, մյուս կողմից քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվությամբ, մասնավորապես ԻԿՕՄ Հայաստանի ազգային կոմիտեի և «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի» ստեղծմամբ:

Այսօր մեր թանգարանները կարևոր կրթամշակութային դեր են ստանձնել հանրային կյանքում, որոնք մի կողմից ապահովում են հարուստ պատմամշակութային ժառանգության պահպանությունն ու հանրայնացումը, մյուս կողմից դարձել են սոցիալ-կրթական կենտրոններ՝ ներգրավելով հանրության տարբեր խմբերի և լսարաններ:

Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, որպես ոլորտի լիազոր մարմին, թանգարանների



ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Իմ լրագրողական պրակտիկայում նման բան չի պատահել, որ այսօրվա և 17 տարի առաջ գրած նյութերը նույն վերնագրերը ունենան՝ ե՞րբ Մեղրին կու- նենա երկրագիտական թանգարան: Առաջին հրա- պարակումը տպագրվել է «Սյունյաց երկիր» թերթում, 2007 թվականի սեպտեմբերի 30-ի համարում: Զրույցը պատմաբան Նաիրա Հայրապետյանի հետ էր և նույն տեղում, ինչ հիմա՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղում, որի սենյակներից մեկում ծվարել են հնագիտական արժեքները, որ 1990-ականների սկզբից հավա- ջել-ժողովել-դասավորել է մեր գրուցակիցը:



Ե՞րբ պիտի Մեղրին ունենա երկրագիտական թանգարան

Մեր թերթի բարեկամներից է հիմ- նադրամ ժամանակներից, բայց հանդիպելով նրան կես-կատակ, կես-շիտակ հարցնում ենք՝ ո՞վ է ի վերջո Նաիրա Հայրապետյանը: Ժպտալով պա- տասխանում է՝ պարզապես մեղրեցի, ով մտահոգված է Մեղրու մշակույթի պահ- պանմամբ, արժևորմամբ և հանրահռչակ- մամբ: Մեր կողմից ավելացնում ենք՝ նաև պատմագիտական թեմաներով հոդվածներ է հրատարակում: Այս ամենը սկսվեց այն բանից հետո, երբ 1989 թվականին ավար- տեց Երևանի պետհամալսարանի պատ- մության ֆակուլտետը և հայրենի Մեղրի վերադարձավ: Ներկայումս զբաղվում է մանկավարժությամբ և հուշարձանների պահպանությամբ:



տարածաշրջանը հարուստ է ճարտարա- պետական հուշարձաններով, հոգևոր նշա- նակության կրթողներով, ժողովրդական բանահյուսությամբ: Ընդ որում Մեղրիի եկեղեցիներն իրենց որմնակարգությամբ եզակի են Հայաստան աշխարհում: Նախ

Նավորել եկեղեցաշինությունը: Իսկ տասնյակից ավելի տոհմանուններ կան, ովքեր հովանավորել են որմնակար- ների ստեղծումը: Եվ այնուամենայնիվ, ո՞րը կարելի է հա- մարել «թանգարան բաց երկնքի տակ»: «Այս պահին շատ եմ կարևորում Մեղրու բերդի աշտարակների ամրակցման հար- ցը, - ասում է Ն. Հայրապետյանը, - ամե- նաբանուկ մշակութային վայրն է, որտեղ բազմաթիվ զբոսաշրջիկներ են այցելում: Նախ իր բարձրադիր տեղանքով, կարելի է ասել, դիտակետ է հանդիսանում, որովհե- տև այդտեղ բարձրացողները հիանում են Մեղրու համայնապատկերով, նրա բնու- թյամբ ու կոլորիտով: Բայց դեպի այդ աշ- տարակները տասնող ճանապարհի չկա, այդտեղ ուզում են լինել նաև տարեց զբոսաշրջիկները, բայց չեն կարողանում: Եվ ամենակարևորը՝ բերդերը քարաթափ են լինում, ճաքել են պատերը»:

հնարավորություն ունի, թե՞ ոչ: Զիչ բան չի արվել. և՛ հետազոտական, և՛ հավաքչական աշխատանք, որի արդյունքն իմ հեղինակած գրքերն են: Բազմաթիվ միջոցառումները, լրագրային տարատեսակ հրատարակումները, մշա- կութային արժեքային հանրայնացումն է, պահպանությունը, և հընթացս սո- վորում էինք: Անձամբ ես էլ սովորում էի մարդկանցից, ինչպես կարելի է Էջանանցուն լսել ու որևէ բան չսովորել: Եվ այդպես շատերը կային: Եվ գլխավոր ձեռքբերումը՝ բազմաթիվ ազգագրական, հնագիտական արժեքներ, վավերագրեր, փաստաթղթեր, լուսանկարներ: Ամենակարևորը՝ հավաք- չական աշխատանքը կայուն հիմքերի վրա դրեցինք: Միջոցառումներ էինք անում, որին մասնակցում էին տարբեր տարիքի և զբաղմունքի անձինք՝ այդպիսով հաղոր- դակից լինելով իրենց երկրամասի պատ- մությանը, նրա պատմամշակութային ար- ժեքներին:

ժամանակ ցուցադրություն էր կազմակեր- պել: Ի դեպ իմ շփումները պարզել են, որ Կապանի թանգարանը զարգացման ինդիոր ունի: Հանդիպել եմ Սյունիքի մարզ- պետ Ռոբերտ Ղուկասյանի հետ: Մի լուրջ ծրագիր կա. Կապանի երկրագիտական թանգարանը տեղափոխել այսօրվա բիզնես կենտրոնի առաջին հարկը: Համապատաս- խան միջոցներ տրամադրելով՝ մեր թան- գարանը կդառնա շատ հետաքրքիր մի կառույց: Մասնավոր լսել եմ, թե մարզպետը Կապանի երկրագիտական թանգարանում որոշել է ստեղծել նյութերի վերականգնման լաբորատորիա: Եթե սա իրականություն դառնա, ոչ միայն քայլ առաջ կգնանք, այլ Կապանի երկրագիտական թանգարանը բոլոր տեսակետներից կարող է մրցել շատ ու շատ թանգարանների հետ:

ղության թանգարան: Սա մի յուրահատուկ անվանում ունեցող թանգարան կլինի՝ կապ- ված Սյունիքի պատմության հետ: Բազմա- թիվ չիրապարակված նյութեր ունեն: Այս պահին կապ ենք հաստատել Երևանի և Ռուսաստանի Դաշնության երևելի ուսում- նական հաստատությունների և պետական արհիվների, թող զարմանալի չթվա, ածուրդների հետ: Ինձ հաջողվեց աճուրդում հայտնաբերել նախորդ դարի սկզբներին Փարիզում բնակված հայտնի բժիշկ Սմբատ Մելիք-Փարսադանյանի դիտարկումները՝ կանանց կրծքազեղծի հիվանդություններին առնչվող: Այն աճուրդից գնել ենք, որ դառնա մեր ապագա թանգարանի ցուցանմուշ: Հա- վաքում եմ Սյունիքի ամենավաղ նյութեր: Ար- ցախի կորստից հետո անցել եմ Արցախի և Գողթնի ուսանողներին, ովքեր սովորել են Եվրոպայի և Ռուսաստանի բուհերում:

Ներին:

- Երկրագիտական թանգարանում ի՞նչ ունենք Սյունիքի թագավորության անընկող: Մեր երկրամասի պատմության այդ կարևորագույն շրջանը, կարծում ենք, հավիտ պատշաճի ուսումնասիրված չէ:
- Շատ քիչ բան, քանի որ Կապանում այդ ուղղությամբ լուրջ պեղումներ չեն արվել: Բոլոր ժամանակներում շինարարական, գյուղատնտեսական աշխատանքների ժա- մանակ են հնագիտական արժեքներ հայտ- նաբերվել: Սյունիքի թագավորության անընկող նյութերը լավագույն դեպքում ան- տառային հաստ շերտի տակ են: Միայն մասնագիտական պեղումները կարող են սպասված արդյունքը տալ:
- Իսկ գրավոր աղբյուրներ կա՞ն, որպես պատմաբան՝ որևէ բան գրե՞լ եք:
- Ոչ, ես թեման չեմ ուսումնասիրել: Այդ շրջանին անդրադարձել են պատմաբաններ Թադևոս Հակոբյանը, Գրիգոր Գրիգորյանը: Էջանանցու ուսումնասիրություններն շատ ավելի պրոֆեսիոնալ են, քան որոշ պատ- մաբանների, մասնավոր Բաղաբերդի հետ կապված:
- Այնուամենայնիվ, ի՞նչ կավելացնե՞ք սավածին: Թեպետ հարցերի լայն շրջանակ ճնշարկվեց մեր գրույցի ընթացքում:
- Թանգարանների աշխատողներին ըստ ամենայնի վճարել, որպեսզի այնտեղ գնա աշխատելու այդ ոլորտի մասնագետը, այլ ոչ թե թանգարանում հայտնվի պատահական մեկը: Նախ՝ պիտի տալ, հետո պահանջել:



Ե՞րբ պիտի Մեղրին ունենա երկրագիտական թանգարան

ՍԿԻՉԲԸ՝ ԷՁ 11

րով աշտարակը փրկվեց վերջնական փլուզումից: Նաիրա Հայրապետյանի համոզմունքն այն է, որ համայնքներին էլ որոշ հնարավորություն պիտի տան՝ վերականգնելու պատմական հուշարձանները:

Մեղրու տարածաշրջանում «թանգարան բաց երկնքի տակ» հասկացությունը միանգամայն վերաբերում է նաև այն բնակավայրերին, որտեղ այլևս մարդիկ չեն բնակվում, բայց տները տակավին պահպանվում են, որոշները՝ ճարտարապետական կոլորիտով: Կան բազմաթիվ գյուղատեղիներ: Կալեր գյուղը ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդավայրն է, նաև 18-րդ դարի ազգային-ազատագրական պայքարի կազմակերպիչ Պապ գորավարի հայրենիքն է: Կամ Կարճևան գյուղը ոչ միայն Նժդեհի զինակիցների անվան հետ է կապվում, այլև այդտեղ նշանավոր լեզվաբան Էդվարդ Աղայանի հայրական տունն է, որ փլուզման եզրին է, բայց վերականգնման, ամրակայման աշխատանքներ չեն կատարվում, թեպետ այն գրանցված հուշարձան է: Կամ Չվարա վանքը, որ հուշարձանների պահպանման գրքում է գրանցված, հարավային պատը փլվում է: Դեպի Չվարի ջրվեժներ գնացող զբոսաշրջիկները, անշուշտ, մտնում են այդ վանքը...

Թեև անմարդաբնակ դարձած, բայց նշանավոր բնակավայրեր են Մալևը, Ատկեզը, 13-րդ դարի հուշարձաններ կան: Մալևի Կուսանաց անապատում, պատմիչների վկայությամբ՝ ձեռագրահրատարակչական կենտրոն է եղել, ձեռագրեր են ստեղծվել: Աբրահամ Կրետացին Նադիր շահի մոտ ընդունելությունից վերադարձել է Կալեր, այնուհետև գնացել Կարճևան: Պատմական, հնագիտական արժեքներ ունի Շվանիձոր գյուղը՝ իր հանրահայտ

ջրանցույցով:

Ի լրումն այս ամենի նշենք, որ գյուղական լքված տներ կան, որոնք դեռևս ճարտարապետական տեսք ունեն, դրանք պետական պահպանության,



հոգածության ներքո պիտի լինեն: Ինչպես, ասենք, Գորիսի պատմական կենտրոնը, որի պահպանման համար գումարներ են հատկացվում:

Մեղրու Անապատանաց վանքում 2016 թվականից վերականգնողական աշխատանքներ են կատարվում, որոնց նախորդում են պեղումները: Այն իրականացնում է «Երկիր և մշակույթ» համազգային բարեգործական կազմակերպությունը: Քանի որ հարուստ մշակութային շերտեր կան, պեղումներն ու վերականգնումը շարունակական բնույթ են կրում: Բավականին արժեքավոր գտածոներ են հայտնաբերվել: Բայց ցուցանմուշները Կանաձոր են տեղափոխվել, այդտեղի թանգարանում ցուցադրություն պիտի կազմակերպվի, մինչդեռ դա պիտի արվեր թեկուզ Մեղրիի մշակույթի պալատում:

Նաիրա Հայրապետյանի համոզմամբ՝ հենց այդ հանգամանքը կնպաստեր, որ կրկին բարձրաձայնվեր Մեղրիում թանգարան ունենալու հարցը: Թե չէ Մեղրու անցյալով հետաքրքրվողներին առաջնորդում են գեղագիտության կենտրոնի այդ միակ սենյակը, որտեղ իրար գիսի կուտակված են թանգարանային նմուշները: Հենց միակ այդ սենյակի նորոգման խնդրով տարբեր ժամանակներում դիմել է թագաքային իշխանություններին, բայց սայլը տեղից չի շարժվել...

Նաիրա Հայրապետյանի փոխանցմամբ՝ իր հավաքած ցուցանմուշները ավելին կարող էին լինել, բայց պահպանման միջոցներ չունենալով՝ բավարարվել են այդքանով, մինչդեռ թանգարանը և՛ այցեքարտ է, և՛ կրթադաստիարակչական միջավայր: Թանգարանը պարբերաբար պիտի համալրվի նոր ցուցանմուշներով, քանզի ժողովրդի մոտ տակավին պատմական արժեքի ցուցանմուշներ կան, բայց դրսից շատերը գալիս, հնություններ են գնում-տանում, շատ հաճախ մի քանի հազար դրամով:

Հնրքացս հետաքրքրվում ենք, թե որն է ամենաարժեքավոր ու հին ցուցանմուշը: Պարզվում է՝ Տերտերասարի հանքի շահագործման ժամանակ գտնված բրոնզե մանյակը, որ թվագրվում է առաջին հազարամյակով:

Այնուամենայնիվ, բաց դասերի, այցելությունների միջոցով ձգտում են պատմական այդ արժեքներին հաղորդակից դարձնել Մեղրու, Ազարակի, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի դպրոցների աշակերտներին:

Բացի այդ հողի տակից հանված ցուցանմուշները վկայում են այն մասին, թե Մեղրիում ժամանակին ինչ արհեստներ են գործել, գեղեցկական-հասարակական կենցաղային զբաղվածությունն ի՞նչ աստիճանի վրա է եղել: Այդ ցուցանմուշները գույքագրման, ուսումնասիրության կարիք ունեն:

Միայն դա չէ ինդիքը: Մեղրին գիտական, կրթական, մշակութային, ազատագրական պայքարի գործիչներ ունի, որոնց կենսագրության իրազեկումը դաստիարակչական մեծ նշանակություն ունի սերունդների համար: Երիտասարդությունը չզիտի, ով է Էդվարդ Աղայանը, Փարամազը, Ավետիսյանը, Ազարիա Աղեյանը, առաջին բառարանագիրը Երեմիա Մեղրեցին է եղել, արժանահիշատակ է Մովսես Տաթևացու աշակերտը, ով իր ուսուցչի հորդորով գրել է «Պատմություն հրեիցը»...

Ռազմավարական նշանակություն ունեցող Մեղրին (ինչպես սիրում են կրկնել) այս օրերին չի իջնում թերթերի էջերից, բայց ոչ մեկի մտքով չի անցնում, որ այդ կարևոր տարածաշրջանը ցայսօր երկրագիտական թանգարան չունի: Նաիրա Հայրապետյանն ասում է, որ գրավոր դիմել է Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը, բանավոր՝ Մեղրու համայնքապետարանին:

Այստեղ են ասել մամ պատասխանիդ սպասող...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ


Հայոց պատմության հրաշք Քարահունջը



ՊԱՐԻՍ ՀԵՐՈՒՆԻ

Հայագի ֆիզիկոս-մաթեմատիկոս

Առաջին իսկ գիտարշավի արդյունքները չափազանց հետաքրքիր էին և կասկած չէին հարուցում, որ այդ կիկլոպյան կառույցը կանգնեցվել է ծանայել և հնագույն հայերին երեք հիմնական նպատակի համար, այն էլ եղել է Արևի՝ գիսավոր աստծո՝ Ար (Արամազդ, Արև, ինչպես նաև Արրա) տաճարը, այն էլ եղել է հզոր և ճշգրիտ աստղաբաշխական գործիք, այն էլ եղել է խոշորագույն համալսարանական կենտրոն:



Անգիայում է գտնվում հռչակավոր Սթոունհենջը: Ուղղահայաց կանգնեցված իսկա քարեր, որոնք կազմում են ավելի քան 30 մետր տրամագծով շրջան: Այդ ազդեցիկ հնագույն կառույցը համարվում է աշխարհի ութերորդ հրաշալիքը, տարեկան այստեղ է գալիս 2 մլն. զբոսաշրջիկ:

Ի՞նչն է եղել կառույցի նպատակը: Ե՞րբ է կառուցվել, ո՞վքեր են եղել կառուցողները: Բազում մասնագետների ուսումնասիրությունները վերջին 200 տարվա ընթացքում բերել են այն եզրակացության, որ այն հանդիսացել է Արևի պաշտամունքի կենտրոն և աստղադիտարան, որի միջոցով որոշվել են օրացույցը, արևի և լուսնի խավարումները: Կառուցվել է 3800-4000 տարի առաջ՝ քարե և բրոնզե դարերի սահմանագծին, բայց ով է կառուցել, հայտնի չէ: Արդի բրիտանացիներն ու անգլոսաքսերն այն ժամանակ չկային, արևմտյան գիտնականները համարում են, որ այս բարձրագույն մշակույթը և գիտելիքները, որոնք բացակայում էին բրիտանական կղզիների այն ժամանակվա սակավաթիվ բնակիչների մոտ, ներմուծվել են դրսից, ըստ ամենայնի միջերկրածովյան ավազանի արևելյան մասից: Բայց թե ո՞ր երկրից, հայտնի չէ: Նույնպիսի հնագույն քարե կառույցներ կան նաև Ֆրանսիայում, Իռլանդիայում, Շոտլանդիայում և այլ երկրներում:

Ոչ բոլորը գիտեն, որ Հայաստանում Սիսիան քաղաքից 3 կմ հյուսիս, գտնվում է մի հսկայական հնագույն կառույց՝ հարյուրավոր ուղղահայաց կանգնեցված մեծ քարեր, որոնք տեղավորված են որոշակի կարգով՝ երեք հեկտարից ավելի տարածության վրա, ծովի մակերևույթից 1770 մ բարձրության վրա:

Չարմանալի է, որ մինչև օրս այս ապշեցուցիչ հուշարձանը չի ուսումնասիրվել: Մոտակայքում գտնվում է հնագույն մի բնակավայր, որն ուսումնասիրվել է հայ հնետաբանների կողմից (Ս. Լիսիցյան, 1938 թ., Մ. Հասարայան, 1985 թ.) և թվագրված է մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներով: Ինչ վերաբերում է բուն քարե հուշարձանին, արվել են միայն շատ աղուտ, մոտավոր ենթադրություններ նրա պաշտամունքային և աստղաբաշխական հնարավոր կոչման մասին (Օ. ինկիլյան, 1984 թ., Կ. Կուշնարյովա, 1977 թ., Է. Պարսամյան, 1988 թ.):

Այս հին քարե կառույցն ուսումնասիրելու նպատակով սույն հոդվածի հեղինակի կողմից 1994 թ. սեպտեմբերի 18-23-ը (աշնանային գիշերահավասար) ձեռնարկվել է առաջին հատուկ գիտարշավը: Արշավախմբի կազմում էին՝ Սեյրան Հակոբյանը (գեոդեզիստ), Ռուբեն Հովհաննիսյանը (ռեժիսոր), Մելս Երսիսյանը (տեսաօպերատոր), Պավել Սաֆյանը (պատմաբան), Սամվել Մանուկյանը (մեխանիկ-ավտոմատոր): Արշավախումբը գնված էր թողոլիտներով,

հարթաչափերով, խրոնոմետրերով, անկյունաչափերով, հեռադիտակներով, տեսախցիկներով, լուսանկարչական ապարատներով, երկրաչափերով, հաշվիչներով, հատուկ սեպերով, մետաղյա ձողերով, աստիճաններով, պարաններով և այլն:

Անհրաժեշտ է ասել, որ ինչպես առաջին, այնպես նաև հաջորդ գիտարշավների աշխատանքներին մեծ աջակցություն ցույց տվեց Սիսիան քաղաքի հանրությունը: Հատկապես կուզելի նշել պարոնայք Վիլեն Ազոյանին, Լավրենտի Սարգսյանին և ուրիշներին:

Երկրորդ գիտարշավը (նույն կազմով) ձեռնարկվել է 1995 թ. հունիսի 19-24-ը (ամառային արևադարձ): Մասնակցում էին նաև Հրահատ Հակոբջանյանը (ճարտարապետ) և Միքայել Հովսեփյանը (գեոդեզիստ)՝ մասնագետներ Սիսիանից: Արշավախմբի աշխատանքին մասնակցում էր նաև Հ. Կյանյանը՝ մասնագետ Շվեյցարիայից: Երրորդ գիտարշավը տեղի ունեցավ 1996 թվականի հունիսի 20-ից 25-ը: Նույն օրերին քարե՝ հնագույն հուշարձանում աշխատում էր Հայաստանի ռադիոսպորտի ֆեդերացիայի բազմամարդ արշավը, որը համապատասխան միջազգային մարմինների որոշման՝ հունիսի 22-ին և մյուս օրերին ռադիոկապ հաստատեց Անգլիայի, Ֆրանսիայի, Շոտլանդիայի և շատ այլ երկրների կարճալիքայինների հետ, որոնք նախօրոք զգուշացված էին և այդ օրերին գտնվում էին «սթոունհենջներում» կամ այլ պատմական վայրերում:

Առաջին իսկ գիտարշավի արդյունքները չափազանց հետաքրքիր էին և կասկած չէին հարուցում, որ այդ կիկլոպյան կառույցը կանգնեցվել է ծանայել և հնագույն հայերին երեք հիմնական նպատակի համար, այն էլ եղել է Արևի՝ գիսավոր աստծո՝ Ար (Արամազդ, Արև, ինչպես նաև Արրա) տաճարը, այն էլ եղել է հզոր և ճշգրիտ աստղաբաշխական գործիք, այն էլ եղել է խոշորագույն համալսարանական կենտրոն: Կառուցված է եղել ավելի քան 6000 տարի առաջ և օգտագործվել է ավելի քան 4000 տարի, ընդհուպ մինչև Հայաստանում քրիստոնեության ընդունումը:

Հուշարձանի կենտրոնական մասում կանգնեցված 39 քար դասավորված են

ծված, ունենալով 37 մետր երկարությամբ՝ դեպի հյուսիս-հարավ ուղղված փոքր առանցք և 43 մետր երկարությամբ դեպի արևելք-արևմուտք ուղղված մեծ առանցք: «Ձվի» ներսում 20 քար կազմում են աղերձաձև լար մոտ 42 մ երկարությամբ: «Ձվի» կենտրոնում գտնվում են նախկին շինության ավերակներ: Շինությունը ծածկված է եղել քարե մեծ տափակ սալերով: Ըստ ամենայնի, ողջ կենտրոնական մասը ծանայել է պաշտամունքային նպատակների, ուր կատարվել են ծիսական արարողություններ: Մենք կատարել ենք ամբողջ հուշարձանի մանրամասն տոպոնկարահանում: Նրա կենտրոնական մասից ձգվում են երկու երկար և մեկ կարճ ճյուղեր (թևեր-ալեաներ) կանգնած քարերից, որոնք շարված են ոչ բարձր 2-10 մ լայնությամբ թմբերի սալապատ ուղիների եզրերով:

Թևերի վրա գտնվող քարերի նշանավոր և համաշխարհային առումով եզակի առանձնահատկությունն են ինամբով կատարված կանոնավոր անցքերը, որոնք փորված են շատ քարերի վերին մասերում: Անցքերն ուղղված են դեպի հորիզոն (տարբեր ազիմուտներով) կամ շեղ, վերև դեպի երկինք:

Հյուսիսային թևը բաղկացած է 71 հիմնական քարից, ունի 172 մետր երկարություն և վերջում շեշտակի դեպի արևմուտք թեքված 40 մ երկարությամբ ալեա: Այստեղ 43 քար ունեն անցքեր: Հարավային թևը պարունակում է 69 հիմնական քար, որոնցից 27-ը անցքավոր են: Նրա երկարությունը կազմում է 160 մետր, ներառյալ դեպի արևմուտք թեքված վերջնամասը՝ 40 մետր երկարությամբ: Հյուսիս-արևելյան կարճ ճյուղը բաղկացած է երեք քարից՝ առանց անցքերի:

Հուշարձանի շուրջը կան բազմաթիվ օղածև դամբարաններ, ինչը բնորոշ է նաև Սթոունհենջի և նման այլ կառույցների համար:

Հուշարձանի գրեթե բոլոր քարերը բազալտից են: Հողից վեր նրանց բարձրությունը տատանվում է 0,5-ից մինչև 3 մետր, իսկ լայնակի չափը հիմքի մոտ հասնում է 1,5 մետրի: Քարերը գրեթե անմշակ են, բացի վերի մասերից, անցքերից երկարաուն դիտարկման համար որոշ հատուկ խոռոչներ:

Անցքերը, որոնց տրամագիծը 5-7 սմ է, դեպի ծայրերը կոնաձև լայնանում են մինչև 12-ից 16 սմ: Ելնելով անցքերի ներքին մակետներին մինչ այժմ պահպանված ողորկությունից, կարելի է եզրակացնել, որ դրանք ժամանակին եղել են բարձրորակ հղկված: Անցքերը բացվել են տեղում, այդ էլ վկայում մի շարք պատկած քարեր, որոնք անցքերն անավարտ են (օրինակ, թիվ 92, 125 քարերը): Սա վկայում է նաև, որ շինարարական աշխատանքները շարունակվել են երկար ժամանակ, աստղադիտարանի աշխատանքին զուգահեռ:

Շատ քարեր նման են մարդկանց կամ կենդանիների: Հնարավոր է, որ դա պատահականություն է: Մենք պայմանական անուններ ենք տվել քարերից մի քանիսին՝ դա շատ հարմար է: Օրինակ, թիվ 13 քարը մենք անվանել ենք Արքա, թիվ 15-ը՝ Արջ, թիվ 68-ը՝ Աջրոկ և այլն:

Առավել մեծ քարերի կշիռը 50 տոննայից ավելի է: Քարերը բերվել են մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող քարհանքերից: Ներկայումս քարերը մամռապատ են և գունեղ: Հազարամյակների ընթացքում նրանցից շատերը թեքվել են, բնահողի հետ սահել են մի կողմի կամ ուղղակի վայր են ընկել: Ցավոք, քարերից շատերը հատուկ են տապալվել և բարբարոսաբար կտրվել, հատկապես անցքերի մասում: Հանդիպում են նաև թարմ վնասվածքներ: Ինչպես՝ այստեղ էլ չհամեմատելու Սթոունհենջի հետ, որը ցանկապատված է չորս կողմից և պահպանվում է հատուկ գվարդիայի կողմից:

Մեր գիտարշավների ուժերով համարակալված է 203 հիմնական քար: Համարակալումը կատարված է սպիտակ գույնի եմալե ներկով, թվերի բարձրությունը մոտ 10 սմ է: Այդ քարերից 76-ը ունեն անցքեր, 68-ը կանգնած են կայուն, 16-ը՝ թեքված, 90-ը՝ պառկած, իսկ 45-ը՝ կտրված:

Քարերի անցքերն ուղղված են հորիզոնի բնորոշ կետերի: Առաջին իսկ գիտարշավին հայտնաբերվել են անցքեր, որոնք ուղղված են Արևի և Լուսնի ծագելու ու մայրամուտի կետերին գիշերահավասարի օրը (թիվ. թիվ



Ենթակառուցվածների
գարգացման վերաբերյալ,
առաջիկա տարիներին
Նախարարության կողմից
կտրամադրվեն մոդուլա-
յին տնակներ, կունենանք
ցուցասրահ, որտեղ կցու-
ցադրվեն արգելոցի տա-
րածքում գտնված հնագի-
տական նյութերը:



Հարցազրույց «Չորաց քարեր բնակատեղի» պատմամշակութային արգելոցի վարիչ Արամ Դավթյանի հետ:

**Պարոն Դավթյան Նախ՝ ի՞նչ
ասել է արգելոց-թանգարան,
ի՞նչ է իրենից ներկայացնում
«Չորաց քարեր» պատմամշակութային ար-
գելոց-թանգարանը:**

Պատմամշակութային արգելոց-թան-
գարանները պատմական, հնագիտական,
ճարտարապետական կամ այլ մշակութա-
յին արժեք ներկայացնող անշարժ հուշար-
ձանների, հուշարձանախմբերի ուսում-
նասիրման, օգտագործման, ինչպես նաև
պետական սեփականություն հանդիսացող
պատմամշակութային անշարժ հուշարձան-
ների, հուշարձանների համալիրների, պատ-
մական միջավայրի, պատմամշակութային
հողերի և դրան հարող տեղանքապատկեր-
ների պահպանությանը կոչված կազմակեր-
պություններ են:

«Չորաց քարեր բնակատեղին» ՀՀ մշա-
կույթի նախարարության ենթակայության
ներքո գտնվող «Հուշարձանների պահպա-
նության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճ-
յուղ է և ունի արգելոց-թանգարանի կարգա-
վիճակ, որը տրվել է 2010 թվականին:

Արգելոց-թանգարանն ունի վարիչ, հսկիչ,
անվտանգության աշխատող և տոմսավա-
ճառ:

**Որքա՞ն այցելու եք ունենում տարե-
կան, ի՞նչ գնային համակարգ է գործում:**

«Չորաց քարեր» արգելոց-թանգա-
րանում շուրջ երեք տարի է վճարովի հա-
մակարգ է գործում: Անվճար են միջև 0-12
տարեկան այցելուների համար: Իսկ հաշ-
մանդամություն ունեցող անձանց և զինվո-
րականների համար՝ 750 դրամ: Մնացած բո-
լոր այցելուների համար սահմանված է 1500
դրամ:

Ամեն ամսվա վերջին շաբաթ օրը մուտքն
անվճար է բոլոր այցելուների համար:

Այցելուների քանակը Նախորդ տարի
մոտ 20 հազար էր: Իսկ 2019 թ. ունեցել ենք
30 հազար այցելու: Այցելություններն ակտի-
վանում են հատկապես հունիս-օգոստոս
ամիսներին:

**Ի՞նչ ծառայություններ ունի արգելոց-
թանգարանը, ի՞նչ եք առաջարկում այցելու-
ներին:**

Հատուկ էքսկուրսավար չունենք, բայց
մենք սիրով այցելուներին ներկայացնում
ենք Չորաց քարերի պատմությունը, հնա-
վայրի վերաբերյալ շրջանաժող հիմնական
վարկածները: Իսկ օտարերկրյա զբոսաշր-



Ձախից՝ արգելոց-թանգարանի վարիչ
Արամ Դավթյանը, հսկիչներ Աննա
Ռուբենյանը, Մնացական Գրիգորյանը

ջիկներն սովորաբար իրենց էքսկուրսա-
վարն են ունենում:

Մեր գործառնությունների մեջ մտնում են
տարածքի վերահսկումը, ենթակառուց-
վածքների պահպանման ու զարգացման
ուղղությամբ աշխատանքները:

Արգելոցի տարածքում թույլատրվում է
գրքերի և հուշանվերների վաճառք, սպա-
սարկման այլ ծառայություններ չունենք:

**Ի՞նչ ծրագրեր են իրականացվում ար-
գելոց-թանգարանի տարածքում:**

Սոցներդրումների հիմնադրամի մի-
ջոցով կիրականացվի Չորաց քարերի հա-
րակից տարածքների բարեկարգում, կա-
ռուցվում են պահակակետ, կայանատեղի և
հասարակական պետքարան:

**Որքա՞ն տարածք է զբաղեցնում թան-
գարանը՝ սպասարկման գոտիով:**

Հուշարձանի տարածքը, այդ թվում
սպասարկման գոտին, 42 հա է, որից 7-8
հեկտարը բուն հուշարձանի տարածքն է:

**Ի՞նչ ծրագրեր ունեք ընթացիկ տարում
և՛ հնագիտական, և՛ աստղագիտական ուղ-**

ղություններով:

Հնագիտության մասով. որքան ինձ է
հայտնի՝ տարվա ընթացքում պլանավոր-
վում է պեղումներ կատարել արգելոցի տա-
րածքում: Արշավախմբի ղեկավարը ՊՈԱԿ-ի
տնօրենի գիտական գծով տեղակալ Աշոտ
Փիլիպոսյանն է: 2019 թ. կատարած պեղում-
ները կիսատ էին մնացել և ուսումնասիրվող
հատվածը կշարունակեն պեղել:

2020 թ. օգոստոսին 15-ին Բյուրակա-
նի աստղադիտարանի արշավախմբի ներ-
կայացուցիչները, արշավախմբի ղեկավար
Գրիգոր Բրուտյանի ղեկավարությամբ (ով
կորոնավիրուսի հետևանքով մահացավ),
Նախարարության կողմից տրված թույլտ-
վությամբ, ուսումնասիրել են տարածքը: Այդ
աշխատանքը նույնպես շարունակություն
կունենա:

**Տարիներ շարունակ, մասնավորապես
Սիսիանի տարածաշրջանում, օգոստոսի
10-ի լույս 11-ի գիշերը նշվում է հայկական
հին տոմարով Նոր տարին կամ Նավասար-
դը: Ի՞նչ կատարեք այդ մասին:**

Օգոստոսի 10-ի կեսօրից հետո մարդիկ
գալիս են, վրաններ են տեղադրում գիշերը
մնալու համար:

2023-ին ՊՈԱԿ-ի կողմից ներդրում էր

արվել միջոցառման համար՝ մեծ էկրան էր
տեղադրվել քարերի մոտ, բարձրախոսներ:
Իրականացվել էին երաժշտական, հումորա-
յին ծրագրեր: Մոտ 3000 այցելու ունեցանք
այդ օրը: Նավասարդը նշվել է «Արիական
խոհանոց» միջոցառմանը զուգահեռ, որը
տեղի է ունենում Սիսիանում վերջին երկու
տարում:

Մուտքն անվճար էր: Անցած տարի՝ տո-
նակատարության ժամանակ, մուտքը վճա-
րովի էր, դրան Նախորդած երկու տարում՝
անվճար:

Նավասարդը նշելու ավանդույթը տասն-
հինգ տարի առաջ Նախածեռնեց Վազգեն
Գևորգյանը, իսկ հետո դարձավ հանրային
միջոցառում:

**Հանրային ուրիշ ի՞նչ միջոցառումներ
եք կազմակերպում:**

Բացի Նավասարդից, ապրիլի 18-ին,
մայիսի 18-ին նշում ենք թանգարանային
գիշերը, թանգարանների միջազգային օրը,
սակայն այցելուների մեծ ընդգրկում չեն ու-
նենում:

**Ի՞նչ խանգարող հանգամանքներ,
խնդիրներ կան, որ կցանկանայիք լուծված
տեսնել:**

Աշխատանքային ծրագրերը, որ ներ-
կայացրեցի քիչ առաջ, կցանկանայի կարճ
ժամկետներում իրականացվելին: Օրինակ
շինարարությունը, որ հիմնադրամի միջոց-
ներով է արվում... Պետք է ավարտվեր 2021
թ. մարտին, բայց, ինչպես տեսնում եք,
անավարտ է մնացել: Եթե նշված ժամկե-
տում ավարտվեր, տարածքում կունենայինք
Էլեկտրականություն, հանրային պետքա-
րան, ինչը և այցելուներին պատշաճ սպա-
սարկելու հնարավորություն կտար:

Էլեկտրականություն ունենալուց հետո
շատ ծրագրեր կարող էին իրականացվել:
Կունենայինք նաև մշտական ջուր, կանաչ
գոտի:

Ենթակառուցվածների զարգացման վե-
րաբերյալ. առաջիկա տարիներին Նախա-
րարության կողմից կտրամադրվեն մոդու-
լային տնակներ, կունենանք ցուցասրահ,
որտեղ կցուցադրվեն արգելոցի տարածքում
գտնված հնագիտական նյութերը:

Տարածքում կտեղադրվեն սեզոնային
շարժական տաղավարներ:

**2018 կամ 2019 թվականին պեղում-
ների առնչությամբ Սիսիանի համայնքում
հանրային որոշ խմբեր մտահոգություն էին
հայտնել: Ի՞նչ ավարտ ունեցավ այդ ամենը,
արդյո՞ք մարդկանց մտահոգող հարցերն այ-
սօր էլ առկա են:**

Բարձրացված հարցերն անհիմն էին...
Իբր տարածքից քարեր են հանել, գողա-
ցել, վաճառել:

Ստեղծվեց «Փրկե՛ք Ջարահունջը» հա-
սարակական կազմակերպությունը, որին
միացան նաև որոշ սիսիանցիներ ու դիմե-
ցին ոստիկանություն, քննչական կոմիտե,
ազգային անվտանգության ծառայություն:


Շարժման կազմակերպիչները եկել ու
քարերը հաշվել են, բոլոր քարերն իրենց տե-
ղում էին: Մի խոսքով՝ մեղադրանքները չեն
հիմնավորվել:

Ի դեպ, քարերը համարակալել է դեռևս
Պարիս Հերոնին, քարերի վրա համարներն
ընթեռնելի են, բայց ոչ բոլոր քարերն են հա-
մարակալվել, մոտ 30-ից ավելի քար համա-
րակալված չէ:



Միսիանի պատկերասրահը

Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ «Միսիանի պատկերասրահը» հիմնադրվել է 1979 թվականին Միսիանում Հայաստանի ժողովրդական նկարիչ Չաքար Խաչատրյանի նախաձեռնությամբ: Պատկերասրահը գործել է մինչև 1993 թվականը: Իսկ 1993-1998 թթ. վերամիավորվել է Միսիանի Ն. Ադոնցի անվան պատմության թանգարանի հետ:



Ներքո:
Ստեղծագործական լայն դիապազոնով ուշագրավ են եղվարդ Խաբեկյանի էքսպրեսիվ, Մկրտիչ Զամայանի գունազեղ ստեղծագործությունները, ինչպես նաև Ռուբեն Շահվերդյանի դեկորատիվ աշխատանքները:

Մասնաճյուղի ցուցադրությունում կարևոր տեղ են զբաղեցնում նատյուրմորտները, հենց այս ժանրով են ներկայացված Մարտիրոս Սարյանը, Նրա գեղարվեստական սկզբունքների հետևորդներ Միեր Աբեղյանը, Մարիամ Ասլամազյանը, Հարություն Կալենցը ու նաև միանգամայն այլ ուղիներով ընթացող Գոհար Ֆերմանյանը, Գրիգոր Խանջյանը, Հակոբ Հակոբյանը:

Միսիանի պատկերասրահում վերջին երկու տասնամյակում բացվել են հարյուրից ավելի ցուցահանդեսներ, մշտապես կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ և դասախոսություններ:

Պատկերասրահը դարձել է մշակութային «վերնատուն», որտեղ յուրաքանչյուրը կարող է ազատ շրջել և հաղորդակից լինել թանգարանի կյանքին:

Պատկերասրահի հաջողված ծրագրերից է «Ամառային դպրոց» միջոցառումը, որին մասնակցում են Միսիանի մանկապարտեզների ավագ խմբի սաները:

2023 թ. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, գեղանկարիչ Դավիթ Դանիելյանը և Միսիանի համայնքապետ Արմեն Հակոբջանյանը, առաջնահերթ խնդիրներից մեկը համարելով պատկերասրահի վերանորոգումը, նախաձեռնեցին և Ազգային պատկերասրահի հետ միասին սկսեցին վերանորոգման աշխատանքները:

Այժմ Միսիանի պատկերասրահը գտնվում է վերանորոգման ընթացքում, որից հետո հայկական կերպարվեստի 19-20-րդ դարերի հավաքածուն կներկայացվի հանրությանն ամբողջովին նոր, արդիականացված ցուցասրահներում դառնալով արվեստասեր հանրության սիրելի և հաճախ այցելվող մշակութային օջախներից:

Կապանի ժամանակակից արվեստի թանգարանը

1990 թ. մայիսի 10-ին ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստաբան Հենրիկ Իգիթյանի նախաձեռնությամբ, գեղանկարիչ Բորիս Մինասյանի օժանդակությամբ, տեղական իշխանությունների աջակցությամբ Կապանում բացվեց ժամանակակից արվեստի թանգարան:

3 4 տարի անց փորձեցինք ծանոթանալ թանգարանի անցած ճանապարհին և ներկայիս վիճակին՝ այդ նպատակով գրույցի հրավիրելով գեղանկարիչ, թանգարանի համահիմնադիր Բորիս Մինասյանին:

- **Պարոն Մինասյան, թեև մեր լսարանը, մասնավորապես Կապանում, ճանաչում է Ձեզ, բայց կուզենայինք, որ ներկայանայիք ընթերցողին:**

- Ճնշվել եմ Կապանում, ավարտել թիվ 27 գիշերօթիկ դպրոցը, ծառայել եմ խորհրդային բանակում, այնուհետև սովորել եմ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի նկարչագծագրական բաժնում: Բուհն ավարտելուց հետո գործուղվել եմ Երևանի պետամալսարան՝ ձևավորող-նկարիչ: Այդտեղ ծանոթացել եմ արվեստաբան Հենրիկ Իգիթյանի հետ և այդտեղից էլ սկիզբ է առել մեր համագործակցությունը: Նա առաջարկեց վերադառնալ Կապան և այդտեղ բացել ժամանակակից արվեստի թանգարան...


1990 թ. մայիսի 10-ին բացեցինք պատկերասրահը, սակայն մեկ տարի հետո սաստկացավ հայ-ադրբեջանական հակամարտությունը, և ամեն ինչ ավերվեց: Բայց գտնվեցին մարդիկ, ովքեր օգնեցին մեզ դուրս գալ այդ վիճակից: Այդ առումով կուզենայի հատկապես Նշել Կապանի քաղխորհրդի նախագահ Ռադիկ Սարուխանյանի անունը:

- **Հետադարձ հայացք ձգե՞նք. ի՞նչ նախապատմություն ունի գեղանկարչությունը Կապանում:**

- Շատ լավ գիտեմ Կապանի պատմությունը... Նախ՝ կնշեի Սարգիս Մանգասարյանին՝ Ռոբերտ Կամոյանի քեռուն, առաջին գեղանկարիչը՝ ումից ազդեցություն կրեց Կամոյանը: Ճնշողով կապանցիներ ունենք, Հայաստանում ճանաչված՝ Մարատ Նուրիջանյանը, Վահրամ Խաչատրյանը, Ռոբերտ Կամոյանը, քանդակագործ Կառլեն Նուրիջանյանը...

Երբ վերադարձա Կապան, առաջինը հանդիպեցի Կամոյանին: Նա բոլորի լուր-մտիլն էր, շատ բանիմաց մարդ, օրերով զրուցում էինք արվեստի մասին, ուրիշ ոչ մի թեմա մեզ չէր հետաքրքրում: Դրանից հետո ասպարեզ իջավ նոր սերունդը՝ Ռուբիկ Կոստանյան, Բորիկ Մինասյան, Ստեփան Դավթյան, Էլի երիտասարդներ կային: Նկարիչների միության յոթ անդամ էինք, ցավոք Հրանտ Դանիելյանը մահացավ:

- **Սա մի թանգարան է, որտեղ գեղանկարիչները հավաքվեցին, կենտրոնացան: Մինչ**



այս պատկերասրահի հիմնումը Կապանում եղե՞լ է որևէ հաստատություն՝ գեղանկարչությանն առնչվող:

- Քաղաքային պատկերասրահ ենք հիմնադրել, երևի 1982-83 թթ., երկու-երեք խմբակային ցուցահանդես ենք այնտեղ կազմակերպել, անգամ մանուկների ստեղծագործությունների ցուցահանդես ենք բացել, կազմակերպիչը ես էի՝ Բալայան Վալտերի հետ, ով քաղաքի մշակույթի բաժնի վարիչն էր:

- **Բացի այս հաստատությունից Կապանում կա՞ որևէ այլ վայր, որտեղ գեղանկարչությունը, կերպարվեստը ներկայացված են:**

- Կան նկարիչներ, ովքեր ունեն մասնավոր արվեստանոցներ: Այս թանգարանն իր տեսակի մեջ միակն է ու անփոխարինելին:

- **Ներկայացրե՞ք թանգարանի հիմնադրման պատմությունը:**

- Սկզբում Հենրիկ Իգիթյանի և այն ժամանակվա կուլտըրլոմի առաջին քարտուղար Ռուսևոյ Դոնյանի հետ տարածք էինք փնտրում: Նրանք առաջարկեցին մշակույթի պալատում կազմակերպել: Դոնյանին փոխարինեց Կարեն Մկրտչյանը, ով ինձ շատ օգնեց: Շրջխորհրդի գործկոմը որոշում ընդունեց և այն ժամանակվա պիոներ պալատի ամբողջ առաջին հարկը տրամադրեցին մեզ: Լծվեցինք գործի: Առաջին ցուցահանդեսը, որ կազմակերպվեց, քաղաքապետ Գագիկ Աթաջանյանի պաշտոնավարման

Կապույտի ժամանակակից արվեստի թանգարանը

ՍԿԻՉԸ՝ ԵՁ 21

Ժամանակ էր՝ կապույտի նկարիչների մասնակցությամբ:

- Սկզբնական փուլում այս պատկերասրահին Իգիթյանի գեղագիտական կենտրոնի մասնաճյուղն էր:

- Մինչև 2020 թ. եղել է Հենրիկ Իգիթյանի գեղագիտական կենտրոնի մասնաճյուղ, ապա՝ Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի մասնաճյուղ: 2020 թ. հանձնվեց Կապույտի համայնքապետարանին, վերանորոգվեց...

- Մեկ տարի առաջ էլ միավորվեցիք Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի հետ:

- Որպես գեղանկարիչ, ստեղծագործող մարդ, դեմ էի, որ այդ երկու թանգարանը միացվեն: Ոչ մի առնչություն իրար հետ չունեն, Շ. Մովսիսյանի անվան թանգարանը Կապույտ քաղաքի պատմության թանգարան է՝ իր գործառնություններով և բովանդակությամբ, իսկ մեր թանգարանը ժամանակակից արվեստի թանգարան է:

- Անցած 35 տարիների նշանավոր ցուցահանդեսները...

- Տարիների ընթացքում թանգարանում կազմակերպվել են մշտական ցուցադրություններ, ինչպես և անհատական ու խմբակային ցուցահանդեսներ:

Ցուցահանդեսներից մի քանիսը կարող են հիշել...

2012-ին կազմակերպվեց Կապույտի նկարիչների ցուցահանդեսը, որի արդյունքները հրատարակվեցին առանձին գրքով: «Կորուզ Կիժն Հայաստան»-ի աջակցությամբ կազմակերպվեցին մանկական ցուցահանդեսներ, ինչպես և Ռոբերտ Կամոյանի անհատական ցուցահանդեսը:

2013-ին նորից կազմակերպվեց Կապույտի նկարիչների ցուցահանդես՝ «Աշուն-2013» խորագրով:

Լույսը՝ 2014-ին:

2015 թ. ապրիլի 9-ին բացվեց ցուցահանդես «Հիշում եմ և պահանջում» խորագրով՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարեկոյնին:

Այդ տարում կազմակերպեցինք նաև գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես:

2016 թ. սեպտեմբերի 21-ին բացվեց Լարեկ Մինասյանի անհատական ցուցահանդեսը:

2017-ին տեղի ունեցավ «Անհարին ընտրության հնարավորությունը» խորագրով ցուցահանդեսը:

2018-ին նորից կազմակերպվեց գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես:

Այդ տարում բացվեցին նաև Սարգիս Մանգասարյանի գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը, ռուսաստանաբնակ գեղանկարիչ (կապույտի) Արմեն Գասպարյանի «Դանթեի աստվածային կատակերգությունը» խորագրով գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը: Նաև՝ ջերմուկցի Վարդան Ավետիսյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:

2019-ին կազմակերպվեց ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանի լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:

Նույն տարում կապույտի գեղանկարիչ Բաբկեն Գևորգյանի անհատական ցուցահանդեսը:

Եվ այսպես շարունակ...

- Ի՞նչ է այսօր իրենից ներկայացնում թանգարանը:

- Շատաշուք է այն նպատակին, որ Կապույտ քաղաքի կամ Սյունիքի մարզի բնակիչները հայ կերպարվեստին ծանոթանալու համար չհասնեն Երևանի ժամանակակից արվեստի թանգարան, այստեղ՝ տեղում, ծանոթանան հայ արվեստին: Նաև երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակությունն է առաջին պլանի վրա: Կապույտի արվեստի քոլեջից էլ են այցելում գործնական պարապմունքների համար, դպրոցներից են գալիս, մանկապարտեզներից, նաև հայրենասիրական, դաստիարակչական աշխատանք ենք տանում:

- Արդյո՞ք թանգարանի ֆունդը շարունակում էք համալրել:

- 493 ցուցանմուշ ունենք: Դրանք տվել են մեզ՝ ժամանակավորապես տնօրինելու, բայց մենք ձգտում ենք, որ փոխանցեն մեր հաշվեկշիռին:

- Ուզում եք ասել, թեպետ չենք, հաստատությունը պատկանում են համայնքապետարանին, բայց ցուցանմուշները Երևանի ժամանակակից արվեստի թանգարանին են:

- Այո: Ոչ մեկը չի արգելում, որպեսզի գեղանկարիչներն իրենց գործերը բերեն, ցուցադրեն, սակայն պետք է բարձրորժեք լինեն, որակյալ: Երբեմն գեղանկարիչները գործեր են նվիրում թանգարանին: Նորից



եմ ասում մենք դաստիարակչական աշխատանք ենք իրականացնում նաև, մեր հավաքածուն էլ պետք է լինի որակյալ, կրթող, դաստիարակող...

- Պատկերասրահին գումար չի՞ հատկացվում ցուցանմուշներ ձեռք բերելու համար:

- Ոչ, լավ կլիներ, որ համայնքապետարանը համապատասխան հանձնաժողով կազմեր, գնայինք, գնահատեինք ցուցանմուշները, ամենալավները, ամենաորակյալներն ընտրեինք ու գնեինք:

- Ըստ ժանրերի՞ թանգարանի ցուցանմուշները մոտավորապես ի՞նչ են իրենցից ներկայացնում:



- Ամբողջ թանգարանը սոցոնալիզմ է՝ աշխատանք, սեր, երջանկություն, մարգաշխարհ, մի խոսքով՝ թեմատիկ գործեր են: Մեր թանգարանը սոցոնալիզմի լավ թանգարան է, ով հասկանում է՝ հիանում է...

- Նշանավոր նկարիչներ, որոնց նկարները ներկայումս այստեղ ցուցադրված են:

- Ռուտուֆ Նազարյան, Վրույր Գալստյան, Ռաֆֆի և Ռուբեն Աղայաններ, Անատոլի Գրիգորյան, Ալեքսանդր Գրիգորյան, Կարեն Աղայան, ժամանակակից արվեստի ներկայացուցիչներից՝ Սարգիս Համալքաշյան, Արարատ Սարգսյան, Աշոտ Բայանդուր...

- Իսկ տեղացիներից...

- Ռուբիկ Կոստանոյան, Նարեկ Մինասյան...

- Գուցե տեղեկություն ունենա՞ր՝ ո՞վ է տնօրինում Ռոբերտ Կամոյանի գեղարվեստական ժառանգությունը:

- Այնքան ցավալի հարց եք արձարծում. հենց Կամոյան Ռոբերտը մահացավ, վերջ, մոռացվեց: Այնքան վերակրթական է, պետք է անհատական ցուցահանդես կազմակերպել, մեծարել նրան: Եթե արվեստանոցը շարունակի փակված մնա, ապա ցուցանմուշները կփչանան... Պետք է նորոգել, կցել այս թանգարանին և ցուցահանդեսներ կազմակերպել:

- Որպես նկարիչ, ի՞նչ է սիրում նկարել Բորիս Մինասյանը:

- Իմ ուղղությունը, նշանաբանը պայմանականությունների մեջ են, կարելի է ասել՝ սիմվոլիզմ: Սիրում եմ սիմվոլներ նկարել, ծուկ եմ նկարում, հարցնում եմ՝ ինչո՞ւ ծուկ, պատասխանում եմ քրիստոնեության խորհրդանիշ է, Քրիստոսը ձյով կերակրում էր մարդկանց: Կամ նուռ, որը Քրիստոսի արյունն է խորհրդանշում: Միևնույն ժամանակ՝ չեմ սիրում բնանկար, սիրում եմ ուղեղի աշխատանք, այն, որ կապված է փիլիսոփայության հետ... Նկարում նաև մի բան պետք է տեսնես, մի բանի շուրջ բանավիճե, փորձես հասկանալ, թե ինչ էր ուզում ասել գեղանկարիչն այդ նկարով:

Մինասի հիշատակին գեղանկար ունեմ, արտագաղթի թեմայով եմ նկարել, կնոջ հաղթանակն եմ արտացոլել, 500-ից ավելի գործ ունեմ, ընդհանրապես սիրում եմ բնություն և կին հակադրությունը, երբ իր գեղեցկությամբ կինը հակադրվում է բնությանը:

- Ի՞նչ ծրագրեր ունեք ընթացիկ տարում:

- Ժիրայր Աղվեյանի ֆոտոցուցահանդեսը պետք է կազմակերպենք, ինչպես և Գարի Արզումանյանի ցուցահանդեսը:

- Ջանի՞ այցելու եք ունենում տարվա ընթացքում:

- 1500-2000, ամեն մի ցուցահանդեսի բացման ժամանակ 100-150 մարդ է այցելում, դասարաններով են գալիս, մանկապարտեզներից են այցելում, անհատներ են գալիս ու շատ են հավանում, Կապույտի քոյր քաղաքներից են եկել: Կապույտ այցելող հյուրերը հիմնականում լինում են մեր թանգարանում:

Պատվիրակություններ են այցելել Գերմանիայից, Բելառուսից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԻՐՅԱՆԻ



Գորիսի քաղաքային պատկերասրահը

Համայնքի մշակութային այս օջախը հիմնադրվել է 2002 թ.՝ Գորիսի նախկին քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի նախաձեռնությամբ: Կառույցը երկհարկանի է, ունի երկու սրահ, որոնցից մեկը մշտական ցուցադրության համար է, իսկ մյուսը՝ պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսների:



2002 թ. պատկերասրահի ավագ գիտաշխատող է նշանակվել գեղանկարիչ Մարտուն Չաքարյանը, ով ղեկավարել է մինչև 2005 թ.: 2006 թ. մինչև այսօր պատկերասրահը ղեկավարում է գեղանկարիչ, ՀՀ և ԼՂՀ նկարիչների միության անդամ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ Ժիրայր Մարտիրոսյանը, ով բացի Հայաստանից ու Արցախից՝ ցուցահանդեսներ է ունեցել Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Իտալիայում, Կանադայում և Ռուսաստանի Դաշնությունում:

Րասրահի բացման առթիվ՝ սկզբնական ցուցադրության համար Հայաստանի մշակույթի նախարարությունն իր ֆոնդերից պատկերասրահին է տրամադրել կտավներ, որոնք հետ են վերադարձվել 2006 թ.:

Պատկերասրահում անհատական ցուցահանդեսներով հանդես են եկել գեղանկարիչներ Սլավիկ Ղազարյանը (Սիսիան, ապրիլի 12, 2012), Հրանտ Թաղևոսյանը (Երևան, մայիսի 7, 2011), Հրաչյա Սաֆար-

յանը (Երևան, հուլիսի 11, 2011) և այլք: Պատկերասրահի ակտիվ գործունեությանը նպաստել է Ֆրանսիայի Վիեն քաղաքի հայ մշակույթի տունը, որը հովանավորել է բազում ցուցահանդեսներ, և այդ հովանավորությունը պատկերասրահի ֆոնդի նկարները ցուցադրվել են Կապանում, Սիսիանում, Եղեգնաձորում ու Ջերմուկում: 2007 թ. սերտ համագործակցել են Արցախի նկարիչների միության հետ և կազմակերպել են մի շարք համատեղ ցուցահանդեսներ Գորիսում ու Արցախում:



յանը (Երևան, հուլիսի 11, 2011) և այլք:

Պատկերասրահի ակտիվ գործունեությանը նպաստել է Ֆրանսիայի Վիեն քաղաքի հայ մշակույթի տունը, որը հովանավորել է բազում ցուցահանդեսներ, և այդ հովանավորությունը պատկերասրահի ֆոնդի նկարները ցուցադրվել են Կապանում, Սիսիանում, Եղեգնաձորում ու Ջերմուկում: 2007 թ. սերտ համագործակցել են Արցախի նկարիչների միության հետ և կազմակերպել են մի շարք համատեղ ցուցահանդեսներ Գորիսում ու Արցախում:

Անցած ժամանակամիջոցում պատկերասրահում կազմակերպվել են շնորհանդեսներ, գրական և երաժշտական ցերեկոյթներ, ինչպես նաև համայնքային նշանակություն ունեցող մշակութային միջոցառումներ:

2022 թ. հուլիսի 28-ին Գորիսի քաղաքային պատկերասրահում նշվեց Ժիրայր Մարտիրոսյանի ծննդյան 65-րդ տարեդարձը, որի առթիվ կազմակերպվել էր արվեստագետի գեղանկարների ցուցահանդեսը: Ներկայացված էր հորեյարի 80-ից ավելի

կտավ: Ցուցադրված էին տարբեր ոճի ստեղծագործություններ, թեմատիկ կոմպոզիցիաներ, դիմանկարներ, նատյուրմորտներ և բնանկարներ: Դրանք գեղանկարչի կյանքի տարբեր հատվածներում կատարված աշխատանքներ էին՝ սկսած 1981 թվականից: Թեմատիկ աշխատանքների կենտրոնում մարդն էր՝ բնության հետ ծուլված և Գորիսը՝ իր անզուգական բնաշխարհով:

Պատկերասրահում ստեղծվել է նաև անվճար նկարչական խումբ, որտեղ ներգրավված են ինչպես Գորիս քաղաքի, այնպես էլ Արցախից տեղահանված նկարչական ունակություններով օժտված երեխաներ:

Պատկերասրահը բացօթյա ցուցահանդեսներ է կազմակերպել համայնքային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև Գորիսի տարածաշրջանի մի շարք գյուղերում:

Մշակույթի այդ օջախում իրենց ստեղծագործական աշխատանքներով ներկայացել են արվեստի դպրոցի սաները, ԳՊՀ Կերպարվեստի բաժնի ուսանողները, «ԴԵՎՄՐՏ» մանկապատանեկան արվեստի դպրոցի երեխաները և մի շարք հասարակական կազմակերպություններ («ԳՈՒՄ»-ի, Կանանց ռեսուրս կենտրոն, Սյունիքի գրողների մասնաճյուղ, համայնքային գրադարան և երաժշտական դպրոցներ):

Հիմնադրման օրվանից մինչև այժմ պատկերասրահ են այցելել Հայաստանի տարբեր մարզերից նշանավոր մարդիկ, Հայաստանում հավատարմագրված օտար երկրների դեսպաններ, տուրիստներ, Գորիսի քույր քաղաք Վիենից և Ֆրանսիայի այլ քաղաքներից ժամանած պատմիրակություններ: Նաև հյուրընկալվել են բազմաթիվ գեղանկարիչներ, որոնց թվում օտարերկրացի նկարիչ-ստեղծագործողներ Աշոտ Առաքելյան (Զեյնիա), Ադրինե (ԱՄՆ), Նատալիա Օվչինիկովա (Մոսկվա) և Ալեքսեյ Կուզնեցով (Մոսկվա):

Անհատական ցուցահանդեսներով ներկայացել են հանրապետությունում և հանրապետությունից դուրս ճանաչված նկարիչներ ու քանդակագործներ:

2002 թ. պատկերասրահում կազմակերպվել են ցուցահանդեսներ, որի արդյունքում նվիրաբերվել են յոթ տասնյակից ավելի կտավ: Դրանք պատկանում են պատկերասրահի ֆոնդին և պարբերաբար ցուցադրվում են:

Պատկերասրահի տնօրեն Ժիրայր Մարտիրոսյանի փոխանցմամբ՝ ֆոնդում առկա են ճանաչված գեղանկարիչներ Հրանտ Թաղևոսյանի, Նիկոլ Աղաբաբյանի, Լուսին Սամվելյանի, Մելքոն Հովհաննիսյանի, Այսեր Մաթևոսյանի, Արմեն Լորենցի, Լորիկ Միսասյանի ստեղծագործությունները:

Պատկերասրահը նաև արդիականացման խնդիր ունի՝ լուսային էֆեկտներ, ազդանշանային և հակահրդեհային համակարգերի առկայություն, նաև ժամանակակից պահանջներին համապատասխան նորոգելու անհրաժեշտություն կա:

ԿԱՀՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ



Չաքար Խաչատրյանի և Արտաշես Հովսեփյանի տուն-թանգարանը




Միսիան քաղաքի Սպանդարյան փողոցում գտնվող հայրական տունը 2006 թվականին ՀՀ և ՌԴ վաստակավոր, ՀՀ ժողովրդական նկարիչ Չաքար Խաչատրյանը նվիրաբերել է պետությանը՝ իր և ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանի տուն-թանգարան դարձնելու նպատակով:


Տուն-թանգարանը Հայաստանի ազգային պատկերասրահի 13 մասնաճյուղից մեկն է: 2015 թվականից կատարվել են տուն-թանգարանի վերանորոգման որոշ աշխատանքներ:

Տուն-թանգարանն ունի հրաշալի շենքային և տարածքային հնարավորություններ՝ կրթամշակութային ինքնատիպ կենտրոն դառնալու համար: Այս շենքում է Չաքար Խաչատրյանը 1962 թվականին հիմնադրել մանկական արվեստի ստուդիան, որը Հակոբ Կոջոյանի և Սերգեյ Մերկուրովի արվեստի ստուդիաներից հետո երրորդն էր հանրապետությունում: Թանգարանն ունի 1000 քառակուսի մետր այգի, որը նախատեսվում է դարձնել հանգստի և ժամանցի, բացօթյա միջոցառումների ու ցուցադրությունների տարածք, ինչը կնպաստի Միսիան քաղաքի մշակութային կյանքի զարգացմանն ու աշխուժացմանը:

Այժմ իրականացվում են ցանկապատման և տարածքի բարեկարգման աշխատանքներ: Այնուհետև նախատեսվում է վերանորոգել թանգարանի ցուցադրատարածքները, որտեղ միևնույն հարթակում համապարփակ ձևով կներկայացվեն Չաքար Խաչատրյանի և Արտաշես Հովսեփյանի



Չաքար Խաչատրյան



Արտաշես Հովսեփյան

յանի հարուստ ստեղծագործական ժառանգությունը:



Այս պահին մեր աշխատակազմով՝ ավագ գիտաշխատողի ժամանակավոր պաշտոնակատարի՝ Աստղիկ Բաբայանյանի հետ աշխատում ենք առաջիկա տարի միջոցառման վրա, որն ուղղված է Արցախում պատմամշակութային հուշարձանների պահպանմանն ու դրանք սերունդներին անխաթար հանձնմանը:

Երկրում տիրող այս իրավիճակը, բնականաբար, անդադարծել է նաև մեր այցելուների թվաքանակի վրա, հիմնականում նվազել են դրսից այցելությունները: Իրականում մենք մեկ օր, մեկ ժամ Նույնիսկ չենք դադարել աշխատելուց, դպրոցական խմբերի այցելություններ ընդունել, նրանց հետ կրթադաստիարակչական և պատմամշակութային տարբեր աշխատանքներ տանել: Ուրախալի է, որ երբեմն դպրոցականներն են գրքեր նվիրում թանգարանի գրադարանին:

Տուն-թանգարանը դարձել էր մի յուրօրինակ կրթական միջավայր նաև Ինտելեկտուալ ճամբար փոքրիկների համար:

Նրա մեկնարկը տրվել է գրողի տուն-թանգարանից, հանդիպումների ընթացքում փոքրիկներին հաղորդել ենք գիտելիքներ՝ Մերո հանգադյանի կյանքի և գրական գործունեության մասին:

Ճամբարականները վերջին հանդիպմանը գրողի գրադարանը համայնել են նոր ու տարբեր հեղինակների գրքերով, նաև՝ Սերո հանգադյանի «Խոսեց, Հայաստանի լեռներ» պատմավեպով:

Հյուրերի շրջայցը սովորաբար կազմակերպվում է ցուցադրահամալիր և գրողի աշխատանքայնություն, որտեղ ոչ միայն ներկայացված են հանգադյանի անձնական իրերը, գրական-հասարակական գործունեությունը ներկայացնող նյութերը, այլև ցուցամուշներ, որոնք ներկայացնում են գրողի ապրած ժամանակաշրջանի կյանքն ու կենցաղը:

Տուն-թանգարանի գրադարանում հաճախ ունենում ենք խանգադյանական ընթերցումներ, գրքի քննարկումներ, իսկ այգում այցելությունը բարձրադիր վայրից հիանում են մեր բնությանը, տեսողաշտում փոված գեղեցիկ քաղաքով:

2023 թվականի ամռանը Մերո հանգադյանի տուն-թանգարանը հյուրընկալել էր մեծ թվով աշակերտների և ուսուցիչների՝ Հայաստանի տարբեր քաղաքներից:

Թանգարանի հյուրերն են եղել նաև զբոսաշրջիկները, ովքեր մեծ հետաքրքրությամբ ծանոթացել են թանգարանի ցուցանմուշներին:

Տուն-թանգարանը սերտորեն համագործակցում է դպրոցների հետ, որի շնորհիվ իրականացվել են բազում կրթական ծրագրեր, որոնց միջոցով աշակերտները ծնոք են բերում հիմնարար գիտելիքներ հանգադյան գրողի, պատմաբանի, հնագետի ծավալած գործունեության մասին:



գարանային մշակույթն ապահովելը դժվար իրագործելի է դառնում: Փոխվում է նաև հյուրերի աշխարհագրական սփռվածության քարտեզը: Եթե մինչև պատերազմյան փուլում հյուրընկալում էինք ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Չինաստանից, Իտալիայից, Իսպանիայից, ապա այսօր պատկերը փոքր-ինչ փոխվել է, սակայն, ամեն լավ ավանդույթ ու զարգացում վերագտնելի են, եթե խաղաղություն լինի: Երբ երկինքը խաղաղ է, բոլոր մեծ ու փոքր խնդիրները հեշտությամբ լուծելի են դառնում, իսկ եթե երկիրը վտանգված է, ոչինչ չի կարող արժեքավոր լինել՝ նրանից բացի, ինչը նաև բնական է: Ամեն պարագայում պետք է հիշել, որ հայի հավերժական լինելության բանաձևը նրա անկյուրում կամքն ու ուժիքն են, որոնք պարտադրում են, Նույնիսկ՝ անհնարին թվացող շրջադարձերով:

Վստահ եմ՝ դարեր հետո մեկ այլ գրող, պատմիչով գալիքի Միսիան Կարապետների մասին, իր վեպը նորից այս կերպ է ավարտելու. «Եվ այսպես ապրեցինք դարեր»:

ՕՃԵՆԱ ԴԵՏՐՈՍՅԱԼ Թանգարանի գիտաշխատող

Չրուցը հավելում է նոր մանրամասներով:

– 2021 թվականի դեկտեմբերից աշխատում եմ Մերո հանգադյանի տուն-թանգարանում գիտաշխատող: Այս ընթացքում հասցրել եմ ծանոթանալ ոչ միայն թանգարանային աշխատանքին, նաև մասնակցել բազմաթիվ պատմա-հայրենասիրական միջոցառումների կազմակերպմանը:

տությունների, մարզի թանգարանների հետ՝ տուն-թանգարանը դարձնելով ժամանակի մարտահարավերին դիմացող կենսունակ համակարգ:

Հույս ունեմ՝ կզան լավ ժամանակներ, կապրենք խաղաղ ժամանակներում, թանգարանի այցելուները, դրսից ժամանած հյուրերն ու զբոսաշրջիկներն ավելի մեծաթիվ կլինեն, արդյունքում՝ ավելի շատ նրանց կիրազնեցնեք գրողի ստեղծագործական կյանքին ու գործունեությանը, Գորիսի հետոսական պատմությանը:

Հ. Գ. Այս ամենի մտում է հավելել Մերո հանգադյանի խոսքը, ով ասում էր՝ պատմությունն օգնում է մարդուն, որպեսզի նա իր կյանքն ավելի իմաստալից ու գեղեցիկ դարձնի... Ու՛ հավերժական երթ մարդու մեջ ժողովրդին, նրա երախտավոր գրող Մերո հանգադյանի գեղարվեստական պատմագրությանը, ով շարունակելով հայ պատմա-վիպագրության ավանդները՝ իր գրական ժառանգությամբ ստեղծել է մի հերոսական ասք՝ հայ ժողովրդի մտիկ ու հեռավոր անցյալի, հայ աշխատավորի, գիևորի, մարդ-հայրենասերի ինքնատիպ նկարագրի մասին, նույնքան կենսական, որքան հայ ժողովրդի հերոսական էջերն են:

Պետք է խոստովանել՝ երկիր ու ազգի համար մղձավանջային այս օրերում էլ Մերո հանգադյան գրողի անելիքը շարունակում է մնալ հստակ, արդիականությամբ վարակող ու հավատավոր՝ մոխիրներից հառնող հայի անկուս ոգուն, նրա վերածնմանը... **ԶՐՈՒՅՏԸ՝ ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻ**

րեր, որոնց միջոցով աշակերտները ծնոք են բերում հիմնարար գիտելիքներ հանգադյան գրողի, պատմաբանի, հնագետի ծավալած գործունեության մասին:

Կազմակերպվել է գրողի 108-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթ՝ «Կենսական ճշմարտություն» խորագրով:

Միջոցառմանը 7-րդ և 8-րդ դասարանի աշակերտներն անդադարծել են հանգադյանի «Մատյան եղելությանց» վիպակին, «Թագուհին հայոց», «Խոսեց, Հայաստանի լեռներ» պատմավեպերին:

Շատ հաճախ հեռավոր գյուղերի աշակերտների համար առցանց կազմակերպվել ենք կրթական ծրագրեր:

Վերջերս այդպիսի մի համագործակցություն է իրականացվել Հարփի միջնակարգ դպրոցի հետ, որին մասնակցում էին չորրորդ դասարանի աշակերտները:

Ապրիլի 18-ին՝ «Հուշարձանների պահպանության միջազգային օրվա» շրջանակում, կազմակերպվեց Արցախի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջոցառում՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր:

Դպրոցականներին ներկայացրեցին Արցախի պատմամշակութային հուշարձանների պատմությունը՝ Ամարաս, Դաղիվանք, Գանձասար, Սուրբ Դազակացեցոց... Արժանի շուքով ենք նշել թանգարանների միջազգային օրը:

Տուն-թանգարանն իր առջև խնդիր է դրել կրթական ծրագրերի, միջոցառումների և այլ նախաձեռնությունների միջոցով ամուր կպպեր ստեղծել հանրակրթական դպրոցների և կրթական մյուս հաստատությունների հետ:



Մարդահոտ առնելու՝ իրիկնահացի գրույց...



ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱԶԱՆՅԱԼ

Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Լոր գյուղում է գտնվում բանաստեղծ Համո Սահյանի տուն-թանգարանը։ Դաշտոնապես բացվել է 2016 թվականի ապրիլի 14-ին՝ բանաստեղծի ծննդյան օրը։ Այդտեղ է գտնվում նրա գրասենյակը, որի վրա աշխատել է տասը տարուց ավելի, ժամացույցներ, լուսանկարներ՝ մակագրված, նվեր ստացած գրքեր։

Տուն-թանգարանի բակում կանգնեցվել է Համո Սահյանի կիսանդրին։ Հեղինակը քանդակագործ Գետիկ Բաղդասարյանն է, ով, միաժամանակ, բանաստեղծի ընկերն է եղել, մոտիկից ճանաչել է Սահյանին, ընկալել նրա հոգու յուրաքանչյուր թրթռ, ինչը շատ կարևոր է քանդակագործի համար։

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով վերանորոգվել է տուն-թանգարանը, ցուցանմուշների հավաքման, ցուցադրության ձևավորման գիտական հայեցակարգի կազմման և ցուցադրության կազմակերպման աշխատանքներն իրականացրել է մշակույթի նախարարությունը։

Ցուցադրվող թանգարանային առարկաներն ընտրվել են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդից, իսկ ցուցադրությունը համալրվել է բանաստեղծի անձնական իրերով և փաստաթղթերով, որոնք թանգարանին է նվիրաբերել բանաստեղծի որդին՝ Լաիրի Սահյանը։

Բանաստեղն ինքն իր մասին ասում է. «Ճնվել եմ 1914 թվի ապրիլի 14-ին, Սյունյաց Արամազդ լեռան հյուսիսային լանջի իրար մեջ կորած կիրճերից մեկում, մեծ գյուղի փոքրիկ մի թաղի չափ Լոր գյուղում»։ Ապա, դիմելով իր սիրելի լորեցիներին, սյունեցիներին՝ խոստովանության պես նրանց է ուղղում հոգու ուղերձը.

«Սիրելի, լորեցիներ, սիսիանցիներ, սյունեցիներ, ինչքան բան ունի այս խառնիխառն, այս ամբարտավան ժամանակների մարդը ձեզանից սովորելու։ Ձեր չկորցրած, ձեր պահպանածը նահապետականությունն է, ծիսական խեղճությունն է, հետամնացությունն է, այլ՝ կատարյալ մարդկայնություն, որ մարդուն պետք է գայուր ամենուր և ամեն օր, քանի կյանքը կա։ Ճակատը համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը։ Եվ ես շնորհակալ եմ ճակատագրից, որ այդ ժողովրդի ծնունդն է և նրա երագաշատ ապրումների թարգման բանաստեղծը»։

Մեկ այլ դեպքում բանաստեղծը հարցազրույցներից մեկում ասում է.

«Մեր ժողովուրդը վառ անհատականությունների ժողովուրդ է։ Մեր լավ ու վատ հատկանիշներով գոյատևել ենք։

Մեզ պահել է մեր ազգային ոգին։ Գործեն ասել է՝ ազգը պիտի փնտրես նրա տասը տոկոսի մեջ։

Մենք մեր ոգով ապահովվում ենք այդ տասը տոկոսը»։

Հուսանք, բանաստեղծի երագած այդ տասը տոկոսը ոչ միայն կապահովի մեր ազգային ոգին, այլև՝ ազգի համար այս խառն ու խառնակ, աղետային ժամանակներում, որի մեջ ակամա հայտնվել են նաև մշակույթը, հայոց բազմադարյա գիրն ու գրականությունը, նաև կկարողանա երկիրը կայուն և խաղաղ, հոգևոր և տեսանելի հուն հանել։

Չրույցը տուն-թանգարանի հիմնադիր-վարիչ տիկին Քնուշ Հարությունյանի հետ ոչ միայն բանաստեղծի ու նրա ստեղծագործական կյանքի մասին էր, նաև՝ թանգարանի առօրյայի, հոգսերի ու ցանկալի սպասելիքների...

Համո Սահյանի 110-ամյակից շուրջ մեկ ամիս անց՝ նորից բացում ենք բանաստեղծի տան դուռը՝ անկեղծ ակնկալիքով, տեսնելու՝ ի՞նչ է փոխվել այդ մեկ ամսվա ընթացքում, արդյո՞ք այցելումները, հրավիրված հյուրերը, Սահյանի հարազատներն ու ընկերները մի

ստեղծագործությունները։ Ամուսնացած եմ, ունեմ չորս զավակ՝ երեք աղջիկ, մեկ տղա։

Մայրս ինքն էլ շատ էր սիրում Սահյանի պոեզիան։ Հիշում եմ, երբ դաշտից հոգնած տուն էր դառնում, ինդրում էր ինձ՝ մի բան կարդալ ու պարտադիր ասում էր՝ մերը կարդա, այսինքն՝ Սահյանից։

2013 թվականից աշխատում եմ Սահյանի տուն-թանգարանում, այստեղ միակ աշխատողն եմ, միաժամանակ՝ վարիչ ու հավաքարար, փոքրիկ այգու այգեպան...

- Տուն-թանգարանի մասին, ինչպե՞ս ընդհանրական, միջևն՝ ցուցանմուշներ, համալրում և այլն...

- Թանգարանը նախապես, գիտեք, եղել է Սահյանի հայրական տունը, որտեղ նա ծնվել է, ապրել որոշակի հասուն ժամանակ։ Տունն առաջին անգամ մասնակի վերանորոգվել է 1971-72 թթ., բայց, ընդհանուր առմամբ, այն անավարտ էր, հողե շինվածք, հետագայում գրեթե՝ անմխիթար և ավերակի վերածված, քանի որ բանաստեղծի հոր՝ Սահակ պապի մահից հետո այստեղ ոչ ոք չէր ապրել։

Բանաստեղծի 100-ամյակին ընդառաջ՝ համայնքի ղեկավարությունը դիմեց տարածաշրջանային այցելած ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանին, ներկայացրեց խնդրահարույց հարցը՝ Սահյանի տուն-թանգարան ունենալու մասին։ Կազմակերպվեց հանձնաժողով, Հայաստանի սոցիալական հիմնադրամի միջոցով 36 մլն դրամ հատկացվեց՝ տունը վերակառուցելու և նորոգելու, որոշակի օգնություն ցուցաբերվեց նաև ամերիկահայ բարերար Ծահան Կարաբաշյանի կողմից։

Ամբողջությամբ վերափոխվեց տունը, արդյունքում ունեցանք այս փոքրիկ և գեղեցիկ տուն-թանգարանը, որը, սակայն, դեռ վերակառուցման ինչ-ինչ խնդիրներ ունի՝ դիմալի հատվածի և աստիճանների հետ կապված։ Կարևորը՝ այցելումները գոհ են, նրանց պակասը չենք զգում։


2013-ից սկսվել են թանգարանի ցուցանմուշների հավաքման աշխատանքները։ Արդեն ունեինք մի քանի իրեր, գրքեր. ցավոք, տան մեջ որևէ իր չէր պահպանվել։

Թանգարանն ունի բանաստեղծի երեք կիսանդրի-քանդակ։ Մեկը լորեցի Կիմ Հովհաննիսյանի թոռն է հանձնել, որը քանդակագործ Սուրեն Լազարյանի գործն է, մյուսը՝ Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարանի պահուստային ֆոնդից է՝ Լևոն Թոքմաշյանի գործն է, մյուսը, տան բակում տեղադրվածը, արդեն գիտեք՝ Գետիկ Բաղդասարյանն է պատրաստել։ Դրանք վերջին համալրում-ցուցադրություններն են եղել։

Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի պահուստային ֆոնդից մեզ տրամադրվեց յոթ ցուցափեղկ, բանաստեղծի գրամեքենան, իսկ Մշակույթի նախարարությունը՝ պատերին փակցված այս վահանակները՝ բանաստեղծի լուսանկարներով, նրա ստեղծագործությունների ցուցադրումով, գրառումներով։ Այսպիսով՝ 2016-ից թանգարանն ունեցավ հիմնական ցուցադրություն։

Այս պահի դրությամբ ունենք 268 ցուցանմուշ... Վստահաբար՝ բանաստեղծի որոշակի իրեր կան նաև մտերիմ ընկերներ

ՇՐՈՒՆԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԷՅ 28



Նոր ցուցանմուշ չեն բերել իրենց հետ ու նվիրել տուն-թանգարանին...

Ամեն ինչ նույնն էր, բայց այդ մասին՝ թանգարանի վարիչ Քնուշ Հարությունյանի հետ՝ զրույցում։

- Տիկին Հարությունյան, մեր ընթերցողներին, անշուշտ, կհետաքրքիր Ձեր ով ինչը... Այսօր այն, ինչ կապված է Սահյանի հետ, հետաքրքիր է մեզ, իսկ Դուք առաջին մարդն եք, ով իր ողջ օրվա մեծ մասն անց է կացնում բանաստեղծի տուն-թանգարանում, մտքերով՝ ուզի, թե՛ ոչ, նրա հետ Ե...

- Ճնվել եմ 1968-ին Լորում, մասնագիտությամբ՝ տեխնիկ-տեխնոլոգ եմ, բայց շատ եմ սիրել գրականությունը, Սահյանի



Ակսել Բակունցի տուն-թանգարանը

1957 թվականին մեծանուն գրողի հիշատակը հավերժացնելու նպատակով ՀՍՍՀ Միևստրների խորհուրդը որոշում է Գորիսում հիմնել Ակսել Բակունցի տուն-թանգարանը:



Մինչ այդ տունն արդեն չէր պատկանում Բակունցներին: Երբ գրողի ձերբակալությունից հետո հայաձանք է սկսվում ազգականների հանդեպ, Բակունցի եղբայրները՝ Գրիգորը և Արտավազը, դիմում են հորը, որ որևէ տեղից գումար գտնի՝ Ռուսաստան արտագաղթելու համար, քանզի այլևս անհնար էր ապրել Գորիսում: Հայրն այգու և շենքի մի մասը վաճառում է Շալունցներին: Բակունցի մոր մահից հետո տան մյուս մասն էլ վաճառում են Սևիկյաններին: Պետությունը նախ գնում է Սևիկյաններին պատկանող տարածքը, որտեղ և հիմնվում է տուն-թանգարանը:



Այսօր Բակունցի տուն-թանգարանը Գորիսի աչքի ընկնող մշակութային օջախներից է, ուր այցելում են հայ և օտարազգի բազմաթիվ մարդիկ: 2011 թվականից թանգարանի տնօրենն է Վարդան Սարգսյանը:



Այդ ժամանակ թանգարանում եղել է մի հուշասենյակ և ճաշասենյակ, որը հիմա ցուցասրահ է: Բակունցի 90-ամյակի կապակցությամբ կառավարությունը որոշում է կայացնում հետ վերցնել շենքի ամբողջ տարածքը և Բակունցներին պատկանող հողամասը, և շենքը վերականգնվում է այնպես, ինչպես եղել է Բակունցի օրոք: Միայն բուն ցուցասրահներից անջատված մասում, որտեղ նախկինում նկուղ էր, ավելացվում է ևս մեկ սենյակ՝ որպես ֆունդերի պահպանման և աշխատանքային սենյակ:

Բակունցի ծննդյան օրվա կապակցությամբ: Հաջորդ ցուցասրահը եղել է Բակունցների ճաշասենյակը. այդտեղ ներկայացված են փաստաթղթեր, գեղանկարներ, լուսանկարներ, անձնական իրեր, գրքեր, ձեռագրեր: Մյուս ցուցասրահը Բակունցի ծնողների սենյակն է, երրորդը հացատունն է՝ դաձյալ իրական՝ Բակունցներին պատկանող իրերով: Հացատանը գտել ու վերաբացել են թոնիրը, հարազատները նվիրել են իրենց մոտ պահպանված Բակունցների պղնձեղենը:

Թանգարանը երկու ֆոնդ ունի՝ հիմնական և գիտաօժանդակ: Գիտաօժանդակ ֆոնդը մեծ արխիվ է և ուսումնասիրությունների աղբյուր՝ բակունցագիտության համար: Հիմնական ֆոնդը ընդգրկում է Բակունցի ձեռագրերը, ժամանակակիցների հուշերը, կենցաղային իրերը, լուսանկարներ, գեղանկարներ, այն ամենը, ինչը ցուցադրվում է:

Թանգարանը սկզբում եղել է Գորիսի մշակույթի բաժնի ենթակայության տակ, այնուհետև դարձել է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղ: Պաշտոնապես գործել է 1970 թվականից: Հիմնադիր-տնօրենը եղել է Զաքիկ Միքայելյանը:

Այսօր Բակունցի տուն-թանգարանը Գորիսի աչքի ընկնող մշակութային օջախներից է, ուր այցելում են հայ և օտարազգի բազմաթիվ մարդիկ: 2011 թվականից թանգարանի տնօրենն է Վարդան Սարգսյանը:

2012-2014 թվականների ընթացքում ՀՀ մշակույթի նախարարության, ինչպես և ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի աջակցությամբ թանգարանում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում բարեկարգվել ու նորացվել է ցուցասրահը, ամբողջովին փոխվել են շարժական ցուցադրական վահանակները, ցուցափեղկերը, ավելացվել են նոր ցուցադրամուշներ, այդ թվում՝ գրողի լուսանկարչական ապարատը, նրա բեմագրերով նկարահանված ֆիլմերից նկարներ: Արդյունավոր կերպով լուծվել են նաև թանգարանի ջեռուցման համակարգի ներդրման և ցանկապատի վերականգնման խնդիրները:



1980-ականների սկզբից Գորիսում ավանդաբար նշվում է «Բակունցյան օրեր» համաքաղաքային տոնակատարությունը, իսկ Բակունցի ծննդյան օրը՝ հունիսի 13-ին, գրողի հուշարձանի մոտ տեղի է ունենում ծաղկեղման պաշտոնական արարողություն, թանգարանում կազմակերպվում է հուշ-ցերեկույթ:

Ակսել Բակունցի տուն-թանգարանի խորհուրդն է պահպանել և նոր սերունդներին փոխանցել այն սուրբ մասունքները և իրենց վկայությունները, որոնք կապված են մեծ գրողի անվան հետ և կրում են նրա արարիչ ձեռքի դրոշմը:

Այս հարկի ներքո Բակունցը ներկա չէ միայն ֆիզիկապես: Նրա լուսավոր հոգին հավետ այս տանն է, իր ժողովրդի հետ՝ որպես նրա ընթացքի հավերժ ուղեկից: ●




Թե ինչպես հիմնադրվեց Ա. Բակունցի տուն- թանգարանը

Գորիսեցի 60-ամյա Վիդեստա տատը մեծ գրող Ակսել Բակունցի ծննդյան օրը՝ հունիսի 13-ին, իր փոքրիկ թոռներին տուն-թանգարան էր բերել: «Կողքի տանն ենք ապրում, բայց խոխենքը ստեղ մտած չէին, ասի՝ համոթ ա, գոնե էսօր տանիմ, տեսան՝ հինչ կա թանգարանում», - փոքր-ինչ ամաչելով՝ խոստովանեց տիկինը:

Ակսել Բակունցի տուն-թանգարանի դռները միշտ բաց են այցելուների առաջ, սակայն նրա ծննդյան օրն այստեղ ավելի բազմամարդ է լինում: Գորիսի Մաշտոցի փողոցի թիվ 41 տան դիմաց մի մեծ ընկուզենի կա: Այս ծառը տնկել են 4 տարեկան Ակսելն ու հայրը՝ Ստեփան դային: Նախորդ դարի 40-ական թվականներին, երբ իբր փողոցն էին բարեկարգում, քաղաքի կոմունալ բաժինը սղոց է բերում,

...Քաջիկ Միքայելյանի պատմելով, դեռենա 1957 թ. էր ՀՍՍՀ մի-նիստրների խորհուրդը որոշել Ակսել Բակունցի տուն-թանգարան, բայց աշխատանքը կազմակերպող չէին գտել:



Քաջիկ Միքայելյան, Բակունցի տուն-թանգարանի հիմնադիր վարիչ, բանասեր

որ կտրի ծառը...Ակսել Բակունցի մայրը՝ Բոխազգյուղ, վրդովվում է, չի թողնում ու փրկում է ընկուզենին, որը մինչ օրս էլ բերք է տալիս: Անցնում են ծառի մոտով, բացում են դարպասն ու ներս մտնում Բակունցի մասունքներն ու հիշատակը պահող օջախ՝ տուն-թանգարան:

Բակունցի տուն-թանգարանի հիմնադիր վարիչ, բանասեր Քաջիկ Միքայելյանի պատմելով, դեռենա 1957 թ. էր ՀՍՍՀ մի-նիստրների խորհուրդը որոշել Գորիսում հիմնել Ակսել Բակունցի տուն-թանգարան, բայց աշխատանքը կազմակերպող չէին գտել: Հետո էր. Ջրբաշյանն ու Հ. Թամրազյանը հուշել են իր թեկնածությունը: Սերո հասնազայանը, Բակունցի եղբայրը՝ Վահան Բակունցն ու որդին՝ Սեւադա Բակունցը, առաջարկել են նրան՝ ստանձնել թանգարանի տնօրենությունը:

1970-ի սեպտեմբերին մասնակի բացվեց Ակսել Բակունցի տուն-թանգարանը:

Ակսել Բակունցի տուն-թանգարանի բացումը

Հանդիսավոր պայմաններում երեկ (1970 թ. սեպտեմբերի 17) Գորիսում բացվեց սովետահայ ականավոր գրող Ակսել Բակունցի տուն-թանգարանը: Այն տեղավորված է քաղաքի Լենինի փողոցի № 31 տանը, որտեղ ծնվել, իր մանկությունն ու պատանեկությունն է անցկացրել գրողը:

Տուն-թանգարանի բացման առթիվ այստեղ էին հավաքվել շրջանի աշխատավորության հազարավոր ներկայացուցիչներ, գրողներ, արվեստագետներ, կուսակցական, սովետական աշխատողներ:

աշխատել որպես գյուղատնտես: Այստեղ պատկերված են նաև ճեմարանի նրա ուսուցիչների՝ Կոմիտասի, Մանուկ Աբեղյանի, Աշոտ Հովհաննիսյանի և այլոց դիմանկարները:

Առանձին տեղ է հատկացված Բակունցի գրական ստեղծագործություններին, հողվածներին ու ճառերին: Այս բաժնում կան «Եղբայրության ընկուզենիները», «Սև ցեղերի սերմացանը», «Մթնածորը» պատմվածքի առաջին հրատարակությունները, «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպը, գրողի մի քանի ստեղծագործությունների գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն թարգ-



Գորիսի հիմնադրամիտարան
Gevorg Hayrapetyan

Բացման խոսքով հանդես եկավ ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Զ. Պետրոսյանը: Հայաստանի գրողների միության անունից ողջույնի խոսք ասաց Հմայակ Սիրաբը: Բանաստեղծ Սարմենն արտասանեց Բակունցին նվիրված իր ստեղծագործությունը: Այնուհետև ելույթ ունեցան Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ս. Գասպարյանը, № 2 միջնակարգ դպրոցի դիրեկտոր Ռ. Պետրոսյանը և ուրիշներ:

Ներկաները ծաղկեփնջեր դրեցին Բակունցի հուշարձանին, ապա տուն-թանգարանում ծանոթացան Ակսել Բակունցի կյանքին ու գրական գործունեությանը: Ուշագրավ են գրողի դպրոցական և ուսանողական տարիների մասին պատմող ցուցանմուշները: Անվանի արձակագիրը սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թբիլիսիի պոլիտեխնիկումում, Խարկովի գյուղատնտեսական համալսարանում, որն ավարտելուց հետո ուսուցչություն է արել Սիսիանի շրջանի Լոր գյուղում,

մանությունները: Ցուցադրված են նաև Բակունցի մասին Մարտիրոս Սարյանի, Մարշակի, Եղիշե Չարենցի, Արշակ Չոպանյանի, Մարիետա Շահինյանի, Վահրամ Ավագանի և մյուս ականավոր գրողների նամակներն ու ասույթները, նրանց ծայնագրված ելույթների ժապավենները:

Ցուցասրահի կողքին, նախկին տեսքով պահպանվել է գրողի սենյակը, որտեղ կարելի է տեսնել հացենու փայտից պատրաստված մահճակալը, իսկ վերևում գրողի մոր յուղաներկ նկարը, որը պատկանում է Մարտիրոս Սարյանի վրձնին: Այստեղ են նաև գրողի անձնական իրերը: Գրապահարանում նրա սիրելի հեղինակների՝ Թումանյանի, Այգեկոու, Չարենցի, Գոգոլի, Չեխովի, Նեկրասովի, Լերմոնտովի ստեղծագործություններն են: Այս բոլորը տուն-թանգարանին են նվիրել գրողի հարազատները, ընկերներն ու ժամանակակիցները:
«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆ», № 219, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1970 Թ.

Կապանի երկրագիտական թանգարանը

ԱՆՅՈՇԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՍԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՏՆՕՐԵՆ

Ընդհանուր նկարագիր

Կապանի երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 1969 թ. հոկտեմբերի 25-ին: Հիմնադիր տնօրենն էր Մարատ Նուրիջանյանը: 1960-ականներին ծավալված շինարարական աշխատանքների ժամանակ Կապանում հայտնաբերվել են հնագիտական բազմաթիվ առարկաներ, որոնք հիմք են ծառայել թանգարանի ստեղծմանը: Մեծ թվով ցուցանմուշներ թանգարանին է հանձնել շինարար-տրակտորիստ Գառնիկ Պատվականյանը, ով հայտնաբերել է Ծինարարներ (Թեղուտ) թաղամասի կառուցապատման աշխատանքներ կատարելու ժամանակ:



դարանային առարկաների (օբյեկտների) և հավաքածուների ուսումնասիրում, հետազոտում և դասակարգում (որոշ դեպքերում հատուկ մասնագետների միջոցով), ստեղծում և վարում է դրանց տվյալների էլեկտրոնային շտեմարանը, ներդրում ժամանակակից տեխնոլոգիաներ թանգարանային գործունեության ոլորտներում:

5. Գիտահետազոտական գործունեություն, այդ թվում՝ գիտարշավային (հնագիտական, ազգագրական և այլն) հետազոտություններ, մշակում է գիտական հայեցակարգեր, գիտահետազոտական մեթոդներ, մշտական և ժամանակավոր ցուցադրությունների, ցուցահանդեսների թեմատիկ ցուցադրության նախագծեր:

6. Կազմակերպությանն ամրացված պետության սեփականությունը հանդիսացող, թանգարանային, արխիվային, գրադարանային առարկաներով (օբյեկտներով) և հավաքածուներով կազմակերպում է մշտական և ժամանակավոր ցուցադրություններ, ցուցահանդեսներ:

7. Այսպիսով և կազմակերպությանն ամրացված պետության սեփականությունը հանդիսացող թանգարանային, արխիվային, գրադարանային առարկաների (օբյեկտների) և հավաքածուների պահպանություն և պահպանվածություն:

8. Սահմանում է թանգարանի մուտքի, մշտական և ժամանակավոր ցուցադրությունների, ցուցահանդեսների, զբոսարշավի (էքսկուրսիայի) գները և թանգարանային ծառայությունների մատուցման կարգը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Մշտական ցուցադրությունը սկսվում է հնագիտական առարկաների ներկա-



յացմամբ: Գլխավորապես ցուցադրվում է Սյունիքի 19-20-րդ դդ. պատմությունը՝ հայթաթարական բախումները, Առաջին աշխարհամարտը, Չանգեզուրի գոյամարտը, այնուհետև Հայրենական մեծ պատերազմի մասնակցած կապանցիների անձնական իրերն ու նամակները, ինչպես նաև հանրահայտ կապանցիների մասին պատմող կոլաժեր: Մշտական ցուցադրությունն ամփոփվում է Կապանի կենցաղի հարուստ ազգագրական հավաքածուով: Թանգարանն ունի բացօթյա ցուցադրություն, որտեղ ներկայացված են տարբեր դարաշրջանների քարակերտ հուշարձաններ՝ խաչքար, սարկոֆագ, որմնաքանդակ, տապանաքար և այլն: Բակում գտնվող առանձին շինությունը հարմար է ժամանակավոր ցուցահանդեսների, գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպման համար:

ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Թանգարանի հիմնական ֆոնդում ընդգրկված են հնագիտական, ազգագրության, այլ իրերի, փաստաթղթերի, լուսանկարների, թանկարժեք իրերի և մետաղների (3 մատյան), կերպարվեստի, դրամագիտության բաժինները՝ մոտ 10 680 թանգարանային առարկա:


Ցանկանում եմ նշել թանգարանի տնօրենի պաշտոնում նշանակվել եմ 2022թ. սեպտեմբերի 1-ին:

2023 թ. թանգարանի համար եղել է մի շարք ծրագրերի իրականացման տարի: Դրանցից կառանձնացնեմ մի քանիսը, հատկապես ցուցադրությունները: Իրականացրել ենք շուրջ 10 ցուցադրություն-միջոցառում:

1. Կրթության միջազգային օրվան նվիրված «Կապան. կրթության ճանապարհ» խորագիրը կրող ցուցադրություն: Այն իրականացրել ենք հունվարի 24-ին և ներկայացրել կապանյան կրթատները:

2. Հայ - իրանական մշակութային բարեկամության վերաբերող «Կապրի այս չափն ու կարգը շատ տարիներ, դեռ երկար, թեկուզ մարմինս անկենդան, լինի հողին հավասար» ցուցադրությունը, որի ժամանակ ներկա են գտնվել նաև Կապանում վերջերս բացված ԻՀ հյուպատոսության ներկայացուցիչները: Ցուցադրվել է հիմնականում հայ - իրանական մշակութային վերաբերող գորգեր, մետաղադրամներ, լուսանկարներ, կենցաղային իրեր: Ցուցադրությունը ոչ միայն կապանցիների համար է շատ հետաքրքիր եղել, այլև հարևան Իրանի Իսլամական Հանրապետության:

3. «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը և 2023 թ. միացել էր համաեվրոպական «Թանգարանային գիշեր» միջոցառմանը: Այն ներկայացավ «Եվրոպի գանձերը» խորագրով ցուցադրությամբ, դրան զուգահեռ ներկաները մինչև ուշ երեկո դիտել են նաև թանգարանի հիմնական ցուցադրությունը: Նաև Կապանի արվեստի պետական քոլեջի սաների մասնակցությամբ կազմակերպվեց նկարչական մրցույթ՝ «Թանգարանն իմ աչքերով» խորագրով, ինչպես նաև այցելուները հնարավորություն ունեցան վայելելու Կապանի արվեստի պետական քոլեջի սովորողների երաժշտական կատարումները: Այդ օրը հիշարժան



Չուր, եվրոպական անտառային վայրի ցույց եղջուր (Բաղաբերդ, մեզանից մոտ 50-30 հազար տարի առաջ)

Եր, քանի որ թանգարանի տարածքում արհեստական պեղավայր էր բացվել, որտեղ պեղումներ էին կատարում Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի աշակերտները: Նրանք ներկայացրին էլն նաև հնագիտական պեղումների մյուս փուլերը՝ իրերի մաքրումն ու լվացումը, չափազորումն ու գծագրումը, մարդաբանական կապերի հետ աշխատանքը: Ի դեպ, այդ արհեստական պեղավայրը Հայաստանի թանգարանների մեջ հանդիսանում է չորրորդը: Թանգարանի այցելուների համար նաև կազմակերպվել էր «Երկաթե դարյան դաշույնի պատրաստում» վարպետաց դաս:

«Թանգարանային գիշեր» միջոցառումների շարքն ամփոփեց Կապանի արվեստի մանկական դպրոցի թատերարվեստի բաժինը ուսուցիչ Արթուր Գաբրիելյանի ղեկավարությամբ, բեմադրվեց Նինա Դանիելյանի «Կապանյան ուրվագծեր» ներկայացումը:

4. Հուլիսին իրականացրել ենք թանգարանից դուրս ցուցադրություն, որը նվիրված էր 2014-ի 70-ամյակին, և հիմնականում ներկայացվել է ուշ բրոնզեդարյան և երկաթի լայն տարածման շրջանի բրոնզա իրերի ցուցադրություն:

5. Եվրոպական ժառանգության օրերին՝ օգոստոսի 26-27-ը, թանգարանում ծանրաբեռնված շրջան էր: Ներկայացվեց «Գորգագործությունը և ասեղնագործությունը Սյունիքում» 19-րդ դարակեսին և 20-րդ դարասկզբին խորագրով ցուցադրությունը, ինչպես նաև համագործակցել ենք Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի հետ, որի արդյունքում աշակերտները վարպետաց դաս են իրականացրել կարպետագործությունից: Հաջորդ օրը կապանցի սիրված նկարիչ Ռուբեն Կոտանդյանի (Ուբակ) գրաֆիկական նկարների ցուցադրությունն է եղել: Մեր կատարած աշխատանքներն այս քանով չեն սահմանափակվել, համագործակցել ենք Հայաստանի պատմության թանգարանի, ինչպես նաև Էրեբունի պատ-



Միսիանի պատմության թանգարանը



ԹԱԹԹԷԼ ՍՅՈՒՆԻ

Միսիանի պատմության թանգարանի
Նախկին վարիչ



ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միսիանի պատմության թանգարանի
վարիչ

Պատմական Միսիանը, որպես բնակավայր, Ք.ա. 1-ին դարից մինչև 9-րդ դարը, որոշ ընդհատումով, հանդիսացել է Հայաստանի Սյունիք նահանգում ժառանգաբար տիրապետող Սյունիների հայկական իշխանական տոհմի գահահախտ բերդավանդակում և կրել է «Սյունիք» անունը: «Սյունիք» բերդավանդակը վկայված է 5-7-րդ դարերի «Աշխարհացույց» քարտեզների ժողովածուում: Միսիան քաղաքի արևելյան եզրի սարահատին, Ռոտանի կիրճի ծախափնյա բարձունքին դեռևս տեսանելի են 4-րդ դարի վերջին կառուցված «Սյունիք» իշխանահատ բերդի հիմնապատերի մնացորդները:

Միսիան քաղաքում է գտնվում 4-9-րդ դարերում Սյունյաց իշխանական տոհմի գլխավոր սրբավայր ու Նահանգի եպիսկոպոսների աթոռանիստ Սյունի վանքը, որի տաճարը կրում է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» օծյալ անունը:

Միսիան քաղաքի և շրջանի պատմական Սյունյաց աշխարհի գլխավոր Ծղուկ գավառի չափազանց հարուստ պատմությունը ներկայացնելու, հազարամյակների ընթացքում ստեղծված կյուրական և ոչ կյուրական արժեքները հավաքելու, պահպանելու, ուսումնասիրելու, ցուցադրելու և հանրահռչակելու նպատակով 1989 թվականին Միսիանի շրջանի ղեկավար, մասնագիտությամբ պատմաբան Հենզել Առաքելյանի նախաձեռնությամբ և ՀԽՍՀ կառավարության որոշմամբ Միսիան քաղաքում հիմնվեց Միսիանի պատմության թանգարանը: Այն ներկայումս Հայաստանի պատմության թանգարանի մասնաճյուղերից մեկն է և կրում է հայ ակնավոր պատմաբան, բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի (1871-1942) անունը: Վերջինս ծնվել է Միսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: Թանգարանի հարևանությամբ տեղադրվել է Ն. Ադոնցի հուշարձանը (քանդակագործ՝ Արտաշես Հովսեփյան):

Նորաստեղծ թանգարանի ֆունդ սկզբնապես ձևավորվել է Միսիանում նախկինում եղած Պիոներ տան և Հացի թանգարանների հավաքածուներով, առարկաներով, հետագայում համալրվել Միսիանի շրջանի բնակիչների կողմից պատահաբար հայտնաբերված և թանգարանին նվիրաբերված իրերով:

Միսիանի պատմության թանգարանի ֆունդն այժմ ընդգրկում է տարբեր պատմական դարաշրջանների՝ միջին բրոնզի դարից մինչև նորագույն ժամանակների պատկանող, Միսիանի շրջանի մշակութային երևույթներն արտացոլող զանազան առարկաներ: Այն հիմնականում կազմված է հնագիտության և ազգագրության բաժիններից: Հնագիտության բաժնում կան «Չորաց քարեր» քաղաքատեղիին կից դամբարանադաշտից, Միսիան քաղաքից, շրջանի Ադիտու, Լոր գյուղերից պեղումների շնորհիվ հայտնաբերված և հնագետների կողմից թանգարանին նվիրաբերված առանձին առարկաներ:

Ազգագրության բաժինը ներկայաց-

նում է Միսիանի շրջանի 20-րդ դարի առաջին կեսի գորգարվեստը, տարազը, 1950-60-ականների ձեռագործը, արհեստները: Կան 17-19-րդ դարերում տպագրված գրքեր, լուսանկարներ, փաստաթղթեր:

Թանգարանի ձևավորման, նրա հավաքածուների վերաբերյալ հրատարակվել են «Քարադարան» (2010թ.) «Գորգեր և ձեռագործ» (2010թ.) և «Կայացման տարիներ» (2012թ.) խորագրերը կողո գրքույկներ՝ թանգարանի անդրանիկ տնօրեն Ծ. Պետրոսյանի հեղինակությամբ:

Թանգարանի պուրակը հարուստ է քարե հուշարձաններով: Դեռևս 1983-84 թվականներին Միսիանի շրջանի ղեկավար Շչորս Դավթյանի նախաձեռնությամբ այստեղ են բերվել շուրջ հինգ տասնյակ քարե զանազան կոթողներ՝ խաչքարեր՝ Անգեղակոթից և Շամբի ՀԷԿ-ի մերձակայքից, վեց ժայռապատկեր՝ Կարկառ հնավայրից, դրվեն (դամբարան)՝ Չորաց քարերից, Սյունիքի վերջին թագավոր Գրիգոր Սյունի 2-րդի քարե սարկոֆագը՝ Շաքեից, առյուծի քանդակ, հայկական մշակույթի ինքնատիպ կոթողներ հանդիսացող և 15-17-րդ դարերով թվագրվող խոյակերպ տապանաքարեր:

ԹԱՆԳԱՐԱՆ ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Ուխտասար. Ժայռապատկերների (իծագրերի) թանգարանը

Լեռնագագաթ Սյունյաց (Չանգեզուրի) լեռնաշղթայում, բարձրությունը՝ 3169 մ, ունի հրաբխային ծագում:

1968 թ. Երևանի պետական համալսարանի հնագետները Սատանաքարի թևկունքի բարձրադիր լճակի հարավային ափի մոտ՝ ծորի պռակի վիթխարի ժայռի վրա, հայտնաբերեցին երկու հազարից ավելի ժայռապատկեր, որոնք վերաբերում են մ.թ.ա. 5-3-րդ հազարամյակներին: Ժայռապատկերների վրա փորագրված կենդանիների հստակ գծագրումներն ու կոմպոզիցիան, տեսարանների բազմազանությունը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Սատանաքարի հյուսիսային կողին հայտնաբերվել են Նախնադարյան մարդու բնակարան-քարայրներ:

Հնագետներն այս լեռն անվանել են Ուխտասար:

Ըստ ՀՍ հանրագիտարանի (հատոր 12, էջ 247) ժայռապատկերները ցրված են հրաբխային խառնարաններից զոյացած լճակների շուրջը, ծորակներում ու դարավանդներում ավելի քան 2 հազար պղնձագույն կամ սև ժայռաքեղկոթների հորիզոնական և ուղղահայաց մակերեսներին:

Բնօրինակներից 4-10 անգամ փոքր պատկերները փորված են 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Քարերի մի մասը, որոնք մոտ են եղել անասնապահների վրաններին, ծածկված են հողաշերտով:

Հնագույն ժայռապատկերները վերաբերում են նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջաններին (մ.թ.ա. 6-4-րդ հազարամյակներ):

Առավել մեծ քանակություն են կազմում բրոնզեդարյան (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներ) պատկերախմբերը, որոնք ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի արտադրական, կենցաղային, որսորդական, պաշտամունքային և այլ բնագավառների վերաբերող տեսարաններ:

Գերակշռում են հատկապես նետ ու աղեղով, պարզ՝ որսորդական այլ պարագաներով (օղակաքաններ, թակարդներ և այլն) որսի տեսարաններին (անհատական, շուրջկալ), փոխադրամիջոցներին (սայլերի



տարատեսակներ և այլն), տիեզերական և կրոնական պատկերացումներին (Արեգակի, Լուսնի և այլ լուսատուների պաշտամունք), ծիսական արարողություններին առնչվող թեմաները:

Կենդանիների (բեզուարյան այծ, մուֆլոն, վիթ, եղջերու, ցուլ, ձի, վարազ, շուն, գայլ, հովազ, առյուծ և այլն) պատկերներում կոռոնդավորմամբ արտահայտված են դրանց բնորոշ առանձնահատկությունները, շարժման պահերը: Իբրև ոճական յուրահատկություններ են դիտվում ցուլերի՝ վերևից դիտարկված պատկերները, ծավալային (եռանկյունի) մանրամասներով կառուցված կենդանապատկերները (այծեր և այլն): Սակավաթիվ խումբ են կազմում թռչնապատկերները:

Ուղտասարի ժայռապատկերները՝ իբրև Նախնադարյան արվեստի կարևոր հուշարձաններ, արժեքավոր սկզբնաղբյուր են Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի հոգևոր և կյանքային մշակույթի պատմության ուսումնասիրման համար:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՁ 40



ԹԱՆԳԱՐԱՆ ԲԱՅ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Ուխտասար. Ժայռապատկերների (իծագրերի) թանգարանը



ՍԿԻՉԲԸ՝ ԷՅ 39

Ըստ «Սիսիանի համառոտ հանրագիտարանի» (հեղինակ՝ Հենգել Առաքելյան)՝ Սիսիանի պատմական արժեքների թվում իրենցից առանձնապես կարևորություն և մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժայռապատկերները:

Դրանք գտնվում են Սառնակունք գյուղի հեռավոր ամառային արոտավայրերում, Ալա գյուղի հարևանությամբ, երկու լեռան՝ Ուխտասարի և Տաք ջրի վրա: Այդ լեռների բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 3000-3300 մետրի: Ամբողջ լեռնազանգվածները պատված են հազարավոր տեսակ ջանդակ-նկարներով:

Ըստ պատմաբանների Գ.Կարախանյանի և Պ. Սաֆյանի՝ ժայռապատկերները բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը ժայռապատկերներն արվել են ավելի վաղ՝ մեր թվարկությունից առաջ 5-4, իսկ երկրորդ խումբը՝ 3-2-րդ հազարամյակներում:

Եթե հիմք ընդունենք այդ տեսակետը, որ դեռևս միակն է, ուրեմն առաջին ժայռապատկերներն այդտեղ արվել են մեզանից շուրջ 7 հազար, իսկ ավելի ուրիշը՝ 4 հազար տարի առաջ:

Այդ փաստը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու հանգամանքը, որ դեռևս նախնադարում, մինչև հայոց պետականության ծննդը, Սյունիքը եղել է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ամենավաղ բնակեցված տարածաշրջաններից, այլև՝ քաղաքակրթության օրրաններից մեկը:

Ժայռապատկերներից յուրաքանչյուրն արվեստի ուրույն մի գործ է: Դրանք ունեն

տարբեր փորվածք: Փորագրության խորությունը տատանվում է մեկից մինչև վեց միլիմետրի սահմաններում:

Ըստ դիտարկումների՝ ժայռերի վրա եղած պատկերները ևս կարելի է բաժանել մի քանի խմբի:

Յուրաքանչյուր այցելու (առանց կողմնակի բացատրության) այդտեղ կարող է տեսնել լեռնաշխարհի ֆաունայի այն ժամանակվա ողջ հարստությունը:

Հատկանշական է, որ այդտեղ կան նաև տիեզերական պատկերացումների հետ առնչվող նկարներ: Իսկ դա նշանակում է, որ նախնադարյան մարդն առնչվել է նաև տիեզերական հետազոտությունների հետ: Այդ հանգամանքը զուրկ չէ հիմքերից, եթե նկատի ունենանք, որ մեզանից դեռևս հազարամյակներ առաջ գործել է Սիսիանի հայտնի աստղադիտարանը՝ Չորաքարերը, որ գտնվում է հենց նույն լեռնազանգվածների ստորոտում:

Քանի որ ժայռապատկերներ տանող ճանապարհները ոչ բոլորին են մատչելի, ուստի դրանցից մի քանիսը դեռևս 1980 թ. բերվել և ցուցադրվում են Սիսիանի Քարի թանգարանում: Դրան անդրադարձել է նաև «Պրավդա» թերթը՝ «Թանգարանի իջավ լեռներից» վերտառությամբ հոդվածով: Սակայն հատկանշական է հանգամանքը, որ Սիսիան բերված ցուցանմուշներն ընդամենը տասը տարում արդեն խունացել են, շատ պատկերներ հազիվ են կշմարվում: Ըստ երևյալի պատահական չէ, որ մեր նախնիներն իրենց արվեստի գործերը մշտապես լուրջ երկնքի մեջ մխրճված լեռներ են հանել:



ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ՏՈՒՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ



Կարպետների բացառիկ հավաքածու Գորիսում

Հիացմունք ապրեցինք, երբ Գորիսի Մաշտոցի 98 տան առաջին

հարկում գտնվող «Անտիկ կաֆե շոպ» սրահում («Օրը քար» ՍՊԸ-ում) ծանոթացանք Ռոման Առուշանյանի հնագիտական առարկաների հավաքածուին: Ըստ երևյալի մարզի ոչ մի թանգարանում, ոչ մի մասնավոր հավաքածուում չենք տեսնի գորգագործության ու կարպետագործության այդքան հարուստ ցուցանմուշներ, որ այդտեղ է: Ընդ որում մեկ դարից ավելի տարիք ունեցող «Սումախի» կարպետ, «Շիրվանի» կարպետ, «Դարախլու» կարպետ, «Գետաշեն» գորգ և այլն: Սյունիքում և Արցախում հայտնի մեզարներ, անկողնապարկ, 180 տա-



րեկան աղաքսակ: Այնուհետև՝ ազգագրական նյութեր, արծաթեղեն՝ ցարական ժամանակներից՝ 84 ընդունելի հարգով:

Ռոման Առուշանյանը, այդքանով հանդերձ, կողեցիներությունն իր գլխավոր զբաղմունքը չի համարում և ոչ էլ այդ իրերը ցուցադրելու, հանրահռչակելու նպատակ ունի:

Հնագիտական և ազգագրական տվյալ նյութերին հաճույքով ծանոթանում են այդ սրահ այցելողները, իսկ սրահին էլ յուրօրինակ ձևավորում է տրվել:

Մենք խորհուրդ տվեցինք Ռոման Առուշանյանին՝ անպայման գիտական կատալոգ կազմել և մտածել այդ արժեքների հանրահռչակման մասին:



Գորիսի Խորենացու փողոցի 36 տան մուտքի մոտ փակցված փայտե «1870» գրուքումն անցորդին անտարբեր չի թողնում: Տանտերը՝ Գագիկ Գրիգորյանը, տան ներսում, կարծես, իր տոհմի 100-ամյա անցյալի ու ներկայի պահածոյացրած պատմությունն է պահում: Եվ որոշել է՝ անկախ ներկա պատերազմական վիճակից, տունը դարձնել թանգարան-թեյարան:



Տարիքը չթաքցնող տունը. սահմանային լարված իրավիճակը չի խանգարի, որ Գորիսում տոհմական թանգարան-թեյարան բացվի

Մինչև կորոնավիրուսի տարածումը՝ մի կարճ ժամանակ, թեյարանը գործում էր, բայց համավարակի ու 44-օրյա պատերազմի պատճառով այն ժամանակավորապես փակվեց: Դադարից հետո Գագիկ Գրիգորյանը որոշել է վերաբացել թանգարան-թեյարանը, որտեղ առանձին սենյակում ցուցադրվելու է իր տոհմի պատմությունը:

Տունը, որտեղ ներկայում ապրում են Գրիգորյանները, 152 տարեկան է: Այն կառուցել է Գագիկ Գրիգորյանի հայրական պապի պապը՝ Գրիգոր Տոռոզյանը, ով 4 տղա եւ մեկ աղջիկ է ունեցել: Մեր գրուցակիցը նկատում է, որ իրականում իրենց տոհմը Տոռոզյան է, հետագայում, սակայն, իր պապն ազգանունը փոխել է Գրիգորյանի:

Բակի մի հատված

Գագիկ Գրիգորյանի տատը՝ Սանամ Մելիք-Նուբարյանը կամ Տեր-Մովսիսյանը (երկու ազգանուններն էլ կրում էր, ապրել է 104 տարի), արմատներով Շիկահողից էր: Սանամ տատի հայրական տունը Տոռոզյանների տան հարեանուբյան է: 1870-1882 թթ. այդտեղ է ապրել Սանամ տատի եղբայրը՝ հայտնի հայ հոգեւորական Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը:

Սանամ տատը

Հետագայում Տեր-Մովսիսյանների տունը դարձել է Ուսուցչի տուն, որն անցյալ տարի պետությունը վաճառեց 32 մլն դրամով: Այդուհանդերձ, հիմա էլ այս տունը Գորիսի պատմամշակութային հուշարձաններից է: Ժամանակին այս տանն են հյուրընկալվել հայ կաթողիկոսներից Խրիմյան Հայրիկը, Վազգեն Ա վեհափառն ու Կիրիլիոս կաթողիկոս Գարեգին Բ-ն (հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա): Գագիկ Գրիգորյանը մինչ օրս պահում է «Գրական թերթի» այն օրինակը, որտեղ գրող Սերո Խան-

զադյանը պատմում է, թե ինչպես 1903 թ. Խրիմյան Հայրիկն Արցախից Տաթև գնալիս հյուրընկալվել էր Տեր-Մովսիսյաններին:

Հատկանշական է, որ Գորիսի պատմամշակութային հուշարձանների ցանկում ներառված է ոչ միայն Տեր-Մովսիսյանների, այլև Տոռոզյանների տունը: Վերջինիս առաջին հարկում հիմա ներկայացված է Գորիսի պատմական կենցաղն ու մշակույթը:

Մուտքի դռը բացելուց հետո ներսում զգում ես սարի ծաղիկների բույրը, որոնք թեյ պատրաստելու համար Գագիկ Գրիգորյանը գնում է հարեանուբյան: Ծաղիկները դրված են ընտանեկան հին բազմոցին, որի շուրջ գրեթե ամեն առարկա նվազագույնը 100 տարեկան է: Տպավորություն է, թե այստեղ ժամանակը հետ են տվել, եւ ներսի թույլ լուսավորումը մթնոլորտը դարձնում է փոքր-ինչ խորհրդավոր:

Գագիկ Գրիգորյանն ասում է՝ մեր տեսած իրերը հիմնականում 100 տարեկան եւ ավելի են: Ու մենք սկսում ենք խոսել դրանց մասին հատ-հատ:

Բազմոցը, ծաղիկներն ու Սանամ տատի կարպետը

Սանամ տատի գործած կարպետը 1908 թվի է: Այն տարիներին հայ կանանց շրջանում գորգագործությունն ու կարպետագործությունը տարածված երեսույթ էին: Ընդ որում՝ այս կարպետն ավարտելու հաջորդ օրը ծնվել է Գագիկ Գրիգորյանի հայրը:

Մուտքի դռն մոտ փայտյա օրորոցն է: Տանտերն ասում է, որ ժամանակին հայրն է քնել այդտեղ, հետո՝ նաև իրենց: Օրորոցը կապում էին երկու գերաններից եւ ճոճում: Այն հիմնականում ամառն էր օգտագործվում:

100 տարվա սրճեփն ենք նայում: Գագիկ Գրիգորյանն ասում է՝ Գորիսում շատերը գիտեն, որ քաղաքում առաջին սուրճն իրենց տանն է եղել: Սանամ տատը թիֆլիսի սովորությունները Գորիս էր բերել:



Վենցաղային իրերի կողքին գրքեր ու նամակներ են, որոնցից հատկապես երկուսը գրուցակիցս հատուկ ուշադրությամբ է ցույց տալիս: Դրանցից մեկն արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի աշխատությունն է, որն Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունն է ներկայացնում, իսկ երկրորդը՝ Կոմիտասի նամակն է արքեպիսկոպոսին: Վերջինս մտերիմ էր Կոմիտասի հետ:

Թումանյանն ու սրբազանը

100-ամյա իրերի կողքին Գագիկ Գրիգորյանն ավելացրել է Նորերը, սակայն դրանք թեյարանի համար են նախատեսված: Երկհարկանի բնակելի տան առաջին

հարկն ամբողջությամբ, ասես, պատմության մի հաստ շերտ է կամ կինոժապավեն, որ անընդհատ թերթում ես: Հարեան սենյակում, որ ավելի փոքր է, Գագիկ Գրիգորյանը գրեթե ավարտին է հասցրել թեթե վերանորոգումը: Հենց այս սենյակում էլ լինելու է նրանց (Տոռոզյան-Գրիգորյանների ու Մելիք-Նուբարյանների կամ Տեր-Մովսիսյանների) տոհմական թանգարանը:

Այստեղ կլինի տոհմական թանգարան

Ներս մտնելուց գրուցակիցս ցույց է տալիս պատի խոռոչը, որը փոքրիկ աղոթատեղի է դարձրել՝ մոմ ու լուցկի դրել այնտեղ: Այն պատահական է գտել՝ պատի սվաղը քանդելու ժամանակ:

Մտանք

1990-ականներին տան ամբողջ առաջին հարկը Գագիկ Գրիգորյանը դարձրել էր տեքստիլի արտադրամաս: Ինքն էլ ավարտել է Մոսկվայի տեքստիլի եւ թեթե արդյունաբերության ինստիտուտը: Արտադրում էին գուլպաներ, շապիկներ, արտադրանքը հիմնականում արտահանվում էր Ռուսաստան: Աշխատել են մոտ 15 տարի, բայց հետո սկսեցին վնասով աշխատել, քանի որ տանտիրոջ պատմելով, Թուրքիայից ու Չինաստանից ներկրումներն անհավասար պայմաններ ստեղծեցին շուկայում: Հիմա էլ, սակայն, հաստոցները կան:

Հայաստանի սահմաններին ու, մասնավորապես, Գորիսում լարված անվտանգային իրավիճակը Գագիկ Գրիգորյանին հետ չի պահել իր ծրագրերից:

HETQ.AM, 26 ՄԱՐՏ 2022 Թ.

Գորիսի «Միրհավ» հյուրանոցի հնագիտական իրերի հավաքածուն, որի մեջ է նաև մամոնտի քանդակը

Գորիս քաղաքի Մաշտոցի 100 հասցեում է գտնվում «Միրհավ» հյուրանոցը հայտնի է նաև հնագիտական ու ազգագրական նյութերի ուշագրավ հավաքածուով:

200 և ավելի ցուցանմուշը հավաքվել են հյուրանոցի սեփականատեր Շահեն Չեյթունցյանի նախաձեռնությամբ ու ջանքերով:


Դրանք տեղադրված են հյուրանոցի տարբեր մասերում (ներսում և դրսում) ու գրավում են այցելուների ուշադրությունը:

Այդ ամենը դիտելուց հանգում են եզրակացության՝ Շահեն Չեյթունցյանը մեծ գործ է կատարել Գորիսի տարածաշրջանի ազգագրությունը հարստացնելու ուղղությամբ:

Հավաքածուի մեջ են խեցեղեն իրեր, ճրագներ և յուղածրագներ, փայտե աշխատանքներ, կապերտային (կարպետային) գործվածքներ, քարե կուռքեր, խնոցիներ՝ կավից ու փայտից, մետաղական առարկաներ, գյուղատնտեսական գործիքներ, կահույք՝ տարբեր տեսակի և ժամանակաշրջանի, դարբնոցային իրեր, պղնձյա առարկաներ, բարակ փուկից գործած խոշոր ծակերով մաղեր՝ ընդեղեններ մաղելու համար:

Հավաքածուի մեջ առավել հետաքրքիր է մամոնտի քանդակը՝ գրանիտից: Թե ինչպես է մոտ 10 հազար տարի առաջ մահացած-անհետացած կաթնասունի քանդակը հայտնվել Գորիսի տարածքում՝ դժվար է ասել:

Տպավորիչ են կապերտային (կարպետային) գործվածքները՝ հետաքրքիր գար-



Այդ ամենը դիտելուց հանգում են եզրակացության՝ Շահեն Չեյթունցյանը մեծ գործ է կատարել Գորիսի տարածաշրջանի ազգագրությունը հարստացնելու ուղղությամբ:



դանոսիվներով, հորինվածքներով, յուրահատուկ նախշերով:

Գորիսը հարուստ է եղել ինչպես կապերտագործությամբ, այնպես էլ խեցեգործությամբ (բրուտագործություն, կավագործություն), ինչը հաստատում են նաև հավաքված խեցեղեն իրերը՝ ամաններ, սափորներ, կժեր, կարասներ՝ տարբեր չափսերի, որոնց թվում խեցեգործական արվեստի բարձրարժեք նմուշներ:

Շատ ափսոս, որ հնագիտական ու ազգագրական այդ ցուցանմուշները դեռևս հաշվառված-գույքագրված չեն ու առայժմ չեն արժանացել ոլորտի մասնագետների ուշադրությանը:

Սակայն, ըստ Շահեն Չեյթունցյանի, առկա հնագիտական իրերը և՛ քարի դարից են, և՛ էնեոլիթից, և՛ բրոնզե դարից ու միջին դարերի տարբեր փուլերից:

Հնագիտական ցուցանմուշների մեծ մասը, անշուշտ, Գորիսի տարածաշրջա-



նից է: Սակայն ցուցանմուշներ կան նաև Արցախից, Կուր-Արաքսյան դաշտավայրից, Արևմտյան Հայաստանից և մասնավորապես Մուշից:

Հնագիտական նյութերի հավաքումը՝ մեկնարկված 2006 թվականից, որքան հասկացանք հյուրանոց կատարած մեր այցելության ընթացքում, շարունակվում է:

Մինչդեռ այսօր արդեն կարելի է փաս-

տել՝ «Միրհավի» մասնավոր հավաքածուն լուրջ ներդրում է ազգագրության ոլորտում: Այն հարուստ նյութ է պարունակում հայ ժողովրդի սյունիքյան հատվածի կենցաղի, սովորույթների, յուրահատկությունների, պատմամշակութային առանձնահատկությունների մասին:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ





Միսիանի քարադարանը

Հիմնադրվել է 1983թ. և զբաղեցնում է շուրջ 4000 քառ. մետր տարածք: Այն ունի ավելի քան 50 եգակի հուշարձան՝ սկսած Սյունիքի ժայռապատկերներից մինչև մերօրյա վարպետների պատրաստած քարե հրաշքները:

Քարերի հետաքրքիր հավաքածու է պահվում Միսիանի պատմության թանգարանի Քարադարանում: Վերջինս գտնվում է Միսիան քաղաքի կենտրոնում, թանգարանին կից և սկսել է կահավորվել դեռ 1983 թվականից: Այն նախագծել է հայտնի ճարտարապետ Ռ. Իսրայելյանի որդին՝ Արեգ Իսրայելյանը: Միսիանի Քարադարանը հաճախ կոչում են Փոքր Սարդարապատ: Իր ոճի մեջ եգակի է Քարադարանի մուտքի դարպասը՝ աստիճանաձև կառուցված մուտքով: Վերջինս եզերում է հսկա բազալտե քիվը՝ «Քարադարան» վերտառությամբ: Սրա կենտրոնում մեռնող-հառնող Փյունիկ թռչունի մանրաքանդակ է: Դարպասի աջ հատվածում քանդակված է Արևի ժամացույցը՝ որպես հավերժ ժամանակի խորհուրդ: Քարադարանում ցուցադրվում են քարեր՝ փրկված շինարարական աշխատանքներից, ճանապարհաշինությունից, Սպանդարյանի ջրամբարի տակ մնացած գյուղերից, ջրատար ցանցերի անցկացումից, որոնք տարբեր տարիների բերվել են քարադարան: Քարադարանում են գտնվում Ուխտասարից բերված ժայռապատկերներ, հեթանոս տաճարների խարխիսներ, խաչասալ, խաչքարեր, խոյքարեր և այլն:



Միսիանի քարադարանի արձանագիր առարկաները

Հատված «Միսիանի Ն. Ադոնցի անվան պատմության թանգարանի արձանագիր առարկաները» հոդվածից)



ԱՐՍԵՆ ՀՄՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Պատմական գիտությունների
թեկնածու

Միսիանի պատմության թանգարանի բակում (փողոցի թանգարանի շինության միջամասում) ստեղծվել է Քարադարան, որը ներառում է տարբեր վայրերից այստեղ հավաքած խաչքարեր, տապանաքարեր և այլ քարեղեն կոթողներ: Փողոցի կողմից, դեռևս 1983 թ. ճարտարապետ Արեգ Իսրայելյանի նախագծով կառուցված մուտք-կամարով, հիմնադրվել է Քարադարանը: Մուտքի վերին ուղղանկյունաձև քարին ընթեռնելի է «Քարադարան» անունը, իսկ ձախակողմյան ուղղահայաց պատին արևի ժամացույց է քանդակված (Նկ. 1):

Թանգարանի հրատարակած «Քարադարան» խորագրով գրքույկում նշված է, որ բակում ցուցադրված կոթողները գտնվել են տարաբնույթ շինարարական աշխատանքների ընթացքում, ինչպես նաև Սպանդարյանի ջրամբարի տակ մնացած գյուղերից: Հիմնական մասը, որը ներկայացնում է Ուխտասարից ու Ջերմաջուրից բերված ժայռապատկերներ, Անգեղակոթ ու Որոտան (Որոտն) գյուղերից տեղափոխված խաչքարեր ու խոյատապաններ՝ ծագումով Միսիանի տարածաշրջանի Շաղատ, Արևիս, Դաստակերտ բնակավայրերից, թանգարան է բերվել 1980-ականների կեսին: Հավելենք, որ բակի շուրջ 50 կոթողներից մեկ տասնյակից ավելին արձանագիր են (ևս 5-ը՝ արաբերեն արձանագրությամբ)², որոնք, ինչպես նաև թանգարանի արձանագիր ցուցանմուշները (պղնձյա սպասք, կղմիկորի բեկորներ, կարաս) մինչ օրս մասնագիտական հատուկ ուշադրության չեն արժանացել: Թանգարանի գույքացուցակներում և ցուցադրված առարկաների պիտակների գրություններում առկա էին որոշ անճշտություններ, ըստ այդմ անհրաժեշտ համարեցինք արձանագրությունները տեղում վերծանել և հրատարակել³:

Արձանագրությունները ներկայացնում ենք ժամանակագրական և տիպաբանական կարգով, վերծանություններն ուղեկցվում են գրչանկարներով⁴ և լուսանկարներով: Վիմագրերի վերծանություններում հատուկ պայմանական նշանների միջոցով վերականգնել ենք գրիչների բաց թողած՝ համառոտագրած, ինչպես նաև եղծված տառերը: Հարկ եղած դեպքում արձանագրությունները ծանոթագրել և նշել ենք նախորդ հրատարակությունների մատենագիտությունը:

Վիմագրեր

1. ՍԱՐԿՈՑԱԳ. բազալտից, գտնվել է 1985 թ. Շաքի գյուղի ճանապարհամերձ հատվածի շինարարական աշխատանքների ընթացքում (չափերը՝ արտաքուստ՝ 2,18x0,65-0,70x0,44-0,48մ, ներքուստ՝ 1,90x0,40-0,46x0,32-0,36 մ): Հատակին ունի 5 սմ տրամաչափի անցք, ինչը թույլ է տալիս կարծել, որ ավելի ուշ այն երկրորդական կիրառություն է ունեցել կամ էլ արվել է տեղափոխման նպատակով: Գլխամասի նեղ նիստն արտաքուստ արձանագիր է, 3 տող.

ՉՏԱՌ[ԱՄ]/ԴԵԱԼ

ԳՐԻԳՈՂԻ ՅՈՒՐԵԱՅՑ:

Դատելով տառաձևերի հնագրական առանձնահատկություններից՝ տապանագիրն առավել հարազատ է 11-12-րդ դդ.: Սարկոֆագը, ըստ ամենայնի, պատկանել է Սյունյաց թագավորության նախավերջին արքա Գրիգոր Բ-ին, ով իր եղբայր Սմբատի հետ վախճանվել է 1166 թ.: Ստեփանոս Օրբելյանի իր Պատմության ԾԹ (59) գլխի «Վասն թագաւորացն Սիւնեաց» խորագրի ներքո հիշատակում է նշված երկրամասի գահակալների անուններն ու նրանց օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձությունները: Սյունյաց արքաներից Գրիգոր Ա-ն վախճանվել է 1072 թ. և թաղվել Վահանավանքում: Նրա տապանաքարը գտնվել է վանքի սյունասրահի արևելյան հատվածի պեղումների ընթացքում հետևյալ արձանագրությամբ. «ԹՎԱԿԱՆ ՇԻԱ. (1072), ԳՐԻԳՈՐ ԹՎԱԿԱՐՈՐ ՈՐԴԻ ԱՇՈՏԿԱՄ»: Այսինքն, սարկոֆագի վիմագրում հիշատակվածը պետք է Գրիգոր Բ-ն լինի, առավել ևս, որ նրա գերեզմանի տեղը ստույգ հայտնի չէ: Վերջինս Սենեքերիմ թագավորի չորս որդիներից ավագն էր (մյուսների անուններն են՝ Սմբատ, Սևադա, Կյուրիկե), ում մասին Սյունյաց պատմագիրը հաղորդում է. «և յետ նորա (Սենեքերիմի- Ա. Հ.) եառ զտերութիւն նորա որդի իւր Գրիգոր՝ նուազ և ընդադօտ թագաւորեալ»⁵: Ինչ վերաբերում է մահվան հանգամանքներին, ապա պատմագիրը միայն



և մերձակա տարածքները մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին և 1-ին հազարամյակի սկզբներին հանդիսացել են խոշոր վարչական ու հոգևոր կենտրոն: Շատ հավանական է, որ Ուրարտական սեպագրերում հիշատակվող Ճուլուկու երկրամասի քաղաքներից մեկը հենց Հարժիսի տարածքում է եղել:

Գյուղի տարածքում ժամանակին գտնվել են նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ, որոնց մի մասը տեղափոխվել է Գորիսի երկրագիտական թանգարան, որոշ հուշարձաններ էլ կամայականորեն տեղափոխվել են գյուղից ու գտնվում են մասնավոր անձանց մոտ: Մի քանի հուշարձան էլ գտնվում է գյուղում:

Ներկայումս գյուղի դպրոցի տնօրեն Նորայր Եսայանի նախաձեռնությամբ և «ՍՕՍ արևելքի քրիստոնյաներին» կազմակերպության հովանավորությամբ աշխատանքներ են տարվում այդ հուշարձանները հայտնաբերելու, ի մի բերելու և գյուղի մշակույթի կենտրոնի բակում տեղակայելու համար:

Նախատեսվող քարադարանում արդեն իսկ իրենց մշտական տեղն են գտել որոշ հուշարձաններ:

Ի դեպ, վերջին շրջանում ակտիվացել է հնագետների հետաքրքրությունը Հարժիս գյուղի ներկայիս տարածքի հանդեպ: ՀՀ ԳԱՄ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Մարիամ Շախմուրադյանի կարծիքով՝ «...Չգիտեմ Հայաստանի մեկ ուրիշ վայրում կա՞ն հնագիտական նյութերի այսքան կուտակումներ, որքան Հարժիսում»:

Արդեն իսկ ընթերցողի սեղանին են հնագետ Օնիկ Խնկիկյանի կողմից գյուղի տարածքում 1980-ականներին կատարված պեղումների արդյունքները:

Դրանից հետո գյուղի տարածքում և շրջակայքում ուսումնասիրություններ են կատարել ՀՀ ԳԱՄ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ինչպես և ԵՊՀ-ի մի խումբ գիտնականներ: Արդյունքում հողված է հրապարակվել անգլերեն լեզվով: Հեղինակներն են Հայկ Ավետիսյանը, Գագիկ Սարգսյանը, Արտակ Գևունին և Արսեն Բոբոխյանը:

Ստորև՝ Հարժիսի տարածքում հայտնաբերված հուշարձաններից մի քանիսը, որոնք տեղ են գտել կամ տեղ կգտնեն քարադարանում:

ՍԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հարժիսի քարադարանը

Հարժիս գյուղը գտնվում է Գորիսի ներկայիս տարածաշրջանում, պատմական Սյունիքի Ծղուկ գավառում, Որոտան գետի ձախ ափի բարձունքում, ծովի մակերևույթից 1730 մ բարձրության վրա: Գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Ստեփանոս Օրբելյան պատմիչի «Սյունիքի պատմությունը» կոթողային գործում մ.թ. 839 թվականին՝ Սյունյաց թեմի առաջնորդ Տեր-Դավթի և Սյունյաց տեր Վասակի որդի իշխան Փիլիպեի միջև կնքված հավիտենական կտակում իբրև Տաթևի

հոգևոր կենտրոնի նոր սահման: Սակայն Հարժիսի տարածքը, իբրև բնակատեղի (այդ տարածքում կա յոթ գյուղատեղի), ըստ նյութական մշակույթի հուշարձանների, հայտնի է բրոնզի դարից (բրոնզի դարը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակ): Բնակավայրերի, ամրոցների և պաշտամունքային հուշարձանների առատ ներկայությունը միևնույն տարածքում վկայում են այն մասին, որ ներկայիս Հարժիս գյուղի

Հարժիսի տարածքը, իբրև բնակատեղի (այդ տարածքում կա յոթ գյուղատեղի), ըստ նյութական մշակույթի հուշարձանների, հայտնի է բրոնզի դարից (բրոնզի դարը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակ):



Դիմամասը վնասված զլուխ, տեղական սպիտակ քար, բարձրությունը մոտ 50սմ, լայնությունը՝ 25 սմ: Գտնվում է Արամ Սարգսյանի տնամերձ այգում: Հուշարձանը գտել է Խաչատուր Սարգսյանը՝ 1942-ին: Հուշարձանի հետ կապված ավան-դագրույց կա գոյություն՝ դրա խորհրդավորության ու զորավորության մասին:



Մարդակերպ քանդակ կամ կուռք, որ հայտնաբերվել է 2017 թվականին՝ գյուղի գերեզմանատանը հողային աշխատանքներ կատարելիս:



Քարե կուռք, գտնվել է ներկայիս գյուղատեղիում: Կերտված է սպիտակագորշ որձաքարից, ունի 76 սմ բարձրություն և զարդարված է հինգ դիմաքանդակով: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակ: Պահվում է Գորիսի երկրագիտական թանգարանում:



◀ Գյուղի տարածքում գտնվող բազմաթիվ մենհիրներից մեկը (Նախնադարյան համայնական դարաշրջանի պաշտամունքային հուշակոթող՝ նվիրված Նախնյաց հիշատակին):

Քառակողմ կոթող, մարդակերպ կոթող: Մեկն էլ պարզապես սյուն է՝ տաճարներին բնորոշ: Տարածքում գտնվել են նաև սյան խարդիխներ. այդ ամենը կշանակում է, որ տվյալ վայրում եղել է տաճար կամ տաճարներ են եղել: Ի դեպ, մարդակերպ կոթողը (Նիստերից մեկի վերջնամասում) ունի մարդու դիմապատկեր՝ երկարավուն դեմքով, կիսաբաց բերանով, կանոնավոր դիմագծերով: Կոթողը գուցե և առնչվում է պտղաբերության աստված Ֆալլիի պաշտամունքին և սլացիկությամբ ուղղված է դեպի վեր: Մարդու դիմապատկերով կոթողը տարիներ շարունակ ցուցադրվել է Երևանում՝ Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպված «Քարերը ժողովելու ժամանակը» խորագրով ցուցահանդեսում:



▶ Մարդակերպ կոթողներ՝ թվով 7 հատ: Ըստ հնագետների՝ ելնելով կերտման առանձնահատկություններից, դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը ներկայացված է ժողովրդական ավանդական ոճի քանդակներով: Երկրորդ խմբի արձաններն արված են ավելի իրական ոճով և այս իմաստով համադրելի են սկյութական մարդակերպ արձաններին: Սակայն դրանցում բացակայում են սկյութական կանանց կերպարներին բնորոշ հիմնական ատրիբուտները, ինչը ենթադրում է այս կոթողների տեղական ծագումը: Մարդակերպ կոթողների վերաբերյալ վերոգրյալ տեսակետի հեղինակներն են պատմական գիտությունների դոկտոր Հայկ Ավետիսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Արտակ Գևորգյան, Արսեն Բորիսյանը, Գագիկ Սարգսյանը: Ըստ Նրանց՝ հաշվի առնելով տարածքին բնորոշ ընդհանուր հնագիտական զարգացումների առանձնահատկությունները, կարելի է դրանք թվագրել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ - 1-ին հազարամյակի առաջին կես:



▶ Եվս երկու հուշարձան, որ գյուղի տարածքից հանվել են կամայականորեն, պատկան մարմինները պարտավոր են վերադարձնել Հարժիս:



▶ 2023 թ. գյուղի տարածքում գտնվել է սալաքար՝ երկու երեսին օձի պատկեր: Ըստ հնագետ Մարիամ Շախմուրադյանի՝ Նախնական սլավներով հուշարձանը մոտ տասը հազար տարվա վաղեմություն ունի: Եվ այն (դիցաբանության համաձայն) կարող էր լինել ջրի պաշտամունքի խորհրդանիշ:



F239



▶ Կնոջ կիսամարմին՝ պղկված գլխով, բազալտ, բարձրությունը՝ 1.25մ, լայնությունը՝ 50սմ: Գտնվում է Հարժիսում՝ Արամ Սարգսյանի տնամերձում:



**Հայ առաքելական եկեղեցու
Սյունյաց թեմի թանգարանի
ստեղծումը՝ օրախնդիր**

Տաթևի վանական համալիրի Ձիթհան-թանգարանը

Ձիթհանը գտնվում է Տաթևի վանական համալիրում, հիմնադրվել է XVII դարում: Այն տեղակայված է ավելի վաղ՝ XIII դարում կառուցված միջնադարյան մենաստանի ամրոցի պատերի հետևում:

Այն ամենը, ինչը XIV դարում անհրաժեշտ է եղել Տաթևի համալսարանի ուսանողներին և վանականներին լիարժեք կյանքի համար, արտադրվել է մենաստանի պատերից դուրս: Վանքապատկան գյուղերում պահվում էին անասունների հոտեր, լճակներում բուծում էին ձկներ, պտղաբերում էին մրգատու այգիները, դաշտերում հասունանում էր ցորենը և գարին: Գյուղացիները հավաքում էին բերքը, խնամում կենդանիներին, մշակում բերքատու ծառերը: Մենաստանի հարկերը բերում էին վանք և արդեն այնտեղ էին հաց թխում, մագաղաթ պատրաստում, քամում ձեթ և գինի: Ձիթհանի երկու սրահներից մեկում պահպանվել է ծավալային ջրաղացաքար, որի օգնությամբ քամվել է ձեթը: Այդ ժամանակներում ձեթը ստանում էին քունջութից, կանեփից, մանախից, ուղտափշից, խաշխաշից, գեր-

չակից և վուշից: Բույսերը կամ նրանց սերմերը սկզբում ջերմային մշակման էին ենթարկում թույլ կրակի վրա, հետո տաքացած զանգվածը մանրատում էին ջրաղացաքարով և տեղավորում էին ճշաբեռի տակ: Ստացված ջրիկախյուրը թողնվում էր, որպեսզի նստվածք տա, հետո գտվում էր և վերջում ստացվում էր հիանալի ձիթայուղ: Այն օգտագործվում էր տնտեսության մեջ և մենաստանի պաշտպանության գործում, ավելցուկը վաճառվում էր կամ փոխանակվում: Ձեթը կազմում էր նաև մյուռոնի հիմնական մասը: Իսկ որպեսզի աշխատող ջրաղացաքարերի աղմուկը մենաստանի հանգիստը չհանգարեր, ձիթհանը տեղակայվել էր մենաստանի պատերից դուրս:

Ձիթհանը Տաթևի վանական համալիրի առաջին օբյեկտն է, որ վերականգնվել է «Տաթևի վերածնունդ» նախագծի շրջանակում:

Ձիթհանում գործում է «Լքված կիրճի հիշողությունը» լուսանկարների ցուցահանդես:



Աշխարհի մի շարք հնագույն ազգեր ու պետություններ հայտնի են ձեթի արտադրությամբ: Այդ ցանկում են նաև հայերը: Հայերը ձեթի արտադրությամբ զբաղվել են դեռևս ուրարտական ժամանակաշրջանում մ.թ.ա. 9-6-րդ դարերում: Այդ ամենը վկայող ու փաստող շատ իրողություններ կան, որոնք հասել են մինչև մեր օրերը:

Յուրահատուկ է Տաթևի վանքի ձիթհանը. հատկանշական է, որ 17-րդ դարում ձեթի արտադրությունը Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից էր: Դրան առաջին հերթին նպաստեց վանքերի հողերի

ընդարձակումը, քանի որ այն հնարավորություն տվեց ավելացնել ձիթհանների թիվը: Միայն 19-րդ դարում Հայաստանում թվագրվում էր մոտ 300 ձիթհան: Դա ևս մեկ անգամ փաստում է, որ ձեթի արտադրությունը Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն էր: Տաթևի վանական համալիրի ձիթհանը մեծ նշանակություն ուներ թե՛ վանքի, և թե՛ վանքի շրջակա տարածքների համար: Մասնավորապես՝ Տաթևի ձիթհանը ժամանակի տեխնիկապես ամենազարգացած ձիթհաններից էր: Դա են վկայում պահպանված գործիքներն ու արտադրության


...Հատկանշական է, որ 17-րդ դարում ձեթի արտադրությունը Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից էր: Դրան առաջին հերթին նպաստեց վանքերի հողերի ընդարձակումը, քանի որ այն հնարավորություն տվեց ավելացնել ձիթհանների թիվը...



նմուշները, որոնք ապացուցում են այդ ամենը: Տաթևի ձիթհանի արտադրանքն ապահովում էր վանքի հարակից բոլոր գյուղերի կարիքները:

Յուրահատուկ է Տաթևի ձիթհանը, որ կառուցված է վանական համալիրի մոտ, սակայն պատերից դուրս: Այդպիսի գյուղացիներն ու աշխարհիկ մարդիկ չէին խանգարի, որ վանական համալիրում կյանքն ընթանար իր բնականոն հունով: Տաթևում տարբեր մշակաբույսեր էին մշակվում և, դրանով պայմանավորված, կառուցվում էին տարբեր տեսակի ձիթհաններ: Փաստացի Տաթևի վանական համալիրը գրեթե ամբողջով, դարձյալ կենտրոն լինելուց զատ, հայտնի էր նաև իր ձիթհանով: Այսօր վանքում կարելի է տեսնել վանական համալիրի երբեմնի խաչքարերը, իսկ մյուս կողմում պահպանված ձիթհանը, որն իր տեխնիկական միջոցներով փաստում է՝ վանքը ձեթի արտադրությամբ ամենամեծերից մեկն էր:

Սակայն 1931 թվականի Սյունիքի մեծ երկրաշարժից հետո, վանքի հիմնական կառույցների հետ մեկտեղ, ավերվեց նաև ձիթհանը: Տաթևի ձիթհանը վերականգնվեց միայն 2010 թվականին: Սակայն անգամ այդ տեսքով այն պատկերացում է ստեղծում, որ վանական համալիրը մանրանկարչության դարոց, մատենադարան և վերոնշյալ մյուս դպրոցներն ունենալու հետ մեկտեղ՝ նաև զարկ է տվել տնտեսության զարգացմանը:



Սյունիք՝ հավերժական Հայաստանի, հայոց պետականության պատվար ու առհավատքա

Սյունիք ՀԱՄԻՆ ՄԱՀՅԱԼ

Մարր-սարի գլխին վառվող խարույկ,
Մարր-սարի փեշից կախված մանուկ,
Մարր-սարերն ի վեր թռչող նժույգ,
Մարր-սարի համար պերճանք ու փայլ,
Մարր-սարի շողքից շիկնած եղբայր,
Մարր-սարի մեջքին կանգնած ընկեր,
Մարր-սարի համար թիկունք ու տեր,
Մարր-սարերն ի վեր թռիչք ու ջանք,
Մարր-սարի համար գմբեթ ու զանգ,
Մարր-սարերի սուրբ Աղոթարան,
Մարր-սարերից վեր Իշխանիկ Մեծ,
Մարր-Գյազրեյ, գլուխն աստղերի մեջ,
Մարն-Արամազդ, Տատան, սարն՝ Արնիս,-
- Մնաք բարով ասեմ, մնաք բարով,
Գերդաստանով, տոհմով, տոհմածառով,
Հավիտենությունից գաղթած սարեր,
Հավիտենությանը հաղթած սարեր
Ինձ էլ բարի գալուստ, բարի ճամփա,
Ինձ էլ հազար բարիք մատրթած սարեր:

Սյունյաց աշխարհի մարգարիտը՝
ԱԼ ԱԻԾՐԸ կամ Իշխանայիճը, որ նաև
Սրբոց սար է կոչվում

ԽՆԼՍՏՈՒԿԻ ԼԵՐՁ



Մեծ Իշխանասար



...Արարատյան բնաշխարհից բացի ոչ մի տեղ Հայկյան ոգու բնատիպած դրոշմը Հայոց երկրում այնպիսի ճշգրտությամբ չի երեւում, ինչպես Սիսական աշխարհում, որովհետև թեպետ Տարոնը կենտրոնական տեղ է զբաղեցնում մյուսներից ավելի եւ հարուստ է ազգային հիշատակներով, բայց Սյունիքը լավագույնն է թվում որպես ազգային ոգու եւ ավանդների պահեստարան՝ ունենալով նախնայաց գրավոր ու անգիր նշխարներ ու հուշարձաններ: Եվ այդ իսկ է զարմանալի, որ թեպետ վաղ ժամանակներից այնքան սերտ հարաբերություն չունենալով ազգային անցողիկ հետ, բայց հարազատորեն է պահել ազգային ոգին, եւ սա, անշուշտ, այսպես է բնակիչների ազատասեր բնավորության պատճառով, հավասարապես՝ նրանց կորովի քաջությամբ, որով նրանք տեղապես դիմակայել են օտարների բռնության՝ օգնական ունենալով իրենց երկրի թե՛ ամրոցները, թե՛ բնական դիրքը, ինչպես ցույց են տալիս հետագա (հիշատակարանները), բնական եւ պատմական տվյալները, որոնցից գլխավորն այն է, որ, անվան հետ միասին, վաղ Հայկյան թագավորության անկումից հետո, երբ Արշակունիները գրավեցին այն, նրանց հարստությունից հետո նմանապես, միայն Սյունյաց իշխաններն էին, որ Բագրատունյաց հարստության ժամանակ ու նրանից հետո եւս կոչվում էին հայկազուններ...

ՂԵՎՈՆԴ ԱԼԻԾԱՆ



**Սյունյաց երկիր
մշակութային**
Հիմնադիր եւ շրջանակագր «ՍՅՈՒՆՅԱՍ
ՍՇԽԱՐՀ» ՍՄՇՍՆԱՓՈՒԿ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԸ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2021թ. ՄԱՐՏԻ 30-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

📍 3301, Սյունիքի մարզ,
ք. Կապան, Շահումյան
20/32:
☎ (+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
✉ **syuniacyerkir@mail.ru**

Թղթակցությունները չեն
գրախոսվում եւ հեղինակներին չեն
վերադարձվում: Խմբագրության եւ
հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել: Նյութերը ներկայացնել
մեքենագիր վիճակում:
🌐 **www.syuniacyerkir.am**

Հղումը «Սյունյաց երկիր.
մշակութային» պարբերականին
պարտադիր է:
Հրատարակվում է ՀՀ կրթության,
գիտության, մշակույթի եւ սպորտի
նախարարության աջակցությամբ:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 13 տպագրական մամուլ:
Տպագրանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
27.06.2024թ.: